

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013 թ.

առաջին կիսամյակ

**«Ֆինանսական կայունության հաշվետվությունում» ներկայացված են  
Հայաստանի ֆինանսական համակարգի կայունությանը սպառնացող  
հավանական ռիսկերի գնահատումը և ֆինանսական համակարգի՝ այդ  
ռիսկերը չեզոքացնելու կարողությունը:**

**Հաշվետվությունում ներառված ՀՀ մակրոտնտեսական միջավայրի և  
ֆինանսական համակարգի վերլուծությունների վերաբերյալ առավել  
մանրամասն տեղեկատվությունը հրապարակվում է «ՀՀ ԿԲ տարեկան  
հաշվետվություն», «Դրամավարկային քաղաքականության ծրագրի  
կատարման հաշվետվություն»,**

**«ՀՀ ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը,  
վերահսկողությունը» պարբերականներում:**

**Հաշվետվությունում օգտագործված են  
30.08.2013 թ. դրությամբ առկա ցուցանիշները:**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ  
Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6  
Հեռախոս՝ (374 10) 58 38 41  
Ֆաքս՝ (374 10) 52 38 52  
Ինտերնետային կայք՝ [www.cba.am](http://www.cba.am)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան .....	5
<b>1. Համաշխարհային տնտեսության զարգացումները .....</b>	<b>8</b>
1.1. Մակրոտնտեսական միջավայր .....	8
1.2. Միջազգային ֆինանսական շուկաներ .....	12
<b>2. Ջարգացումները Հայաստանի մակրոտնտեսական միջավայրում .....</b>	<b>15</b>
2.1. Մակրոտնտեսական զարգացումներ .....	15
2.2. Արտաքին առևտուր .....	17
2.3. Ջուտ գործոնային եկամուտներ և մասնավոր տրանսֆերտներ.....	18
2.4. Տնային տնտեսությունների եկամուտներ և պարտքի բեռ.....	19
2.5. Անշարժ գույքի գներ.....	21
<b>3. Հայաստանի ֆինանսական շուկայի կայունությունը.....</b>	<b>25</b>
3.1. Դրամական և կապիտալի շուկաներ.....	25
3.2. Արժուքային շուկա.....	28
<b>4. ՀՀ ֆինանսական հաստատությունների կայունությունը .....</b>	<b>30</b>
4.1. Առևտրային բանկեր.....	30
4.1.1. <i>Ֆինանսական միջնորդություն, կենտրոնացվածություն.....</i>	<i>31</i>
4.1.2. <i>Վարկային ռիսկ .....</i>	<i>32</i>
4.1.3. <i>Իրացվելիության ռիսկ.....</i>	<i>34</i>
4.1.4. <i>Շուկայական ռիսկ.....</i>	<i>36</i>
4.1.5. <i>Կապիտալի համարժեքություն և եկամտաբերություն.....</i>	<i>39</i>
4.2. Վարկային կազմակերպություններ .....	40
4.3. Արժեթղթերի շուկայի մասնակիցներ .....	42
4.4. Ապահովագրական ընկերություններ.....	42
<b>5. Ֆինանսական կայունությունը ՀՀ ֆինանսական ենթակառույցներում .....</b>	<b>47</b>
5.1. ՀՀ միջբանկային վճարումներ ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգով ....	47
5.2. Ավանդների երաշխավորում .....	50
5.3. Վարկային ռեզիստը և ԱԲՌԱ վարկային բյուրո .....	51
<b>Գծապատկերներ .....</b>	<b>54</b>
<b>Աղյուսակներ.....</b>	<b>57</b>
<b>Տերմինների բառարան .....</b>	<b>58</b>
<b>Օգտագործված հապավումներ .....</b>	<b>60</b>

*Ֆինանսական կայունությունը կարելի է բնորոշել որպես ֆինանսական, մակրոտնտեսական պայմանների այնպիսի համադրություն, որի դեպքում ֆինանսական համակարգը՝ ֆինանսական հաստատությունները, շուկաները և շուկայի ենթակառուցվածքները միասին ունակ են դիմակայելու հավանական ցնցումներին ու անհավասարակշռություններին՝ այդ կերպ նվազեցնելով ֆինանսական միջնորդության գործառույթների ընդհատման հավանականությունը:*

*Ֆինանսական կայունությունը սահմանելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ ֆինանսական անկայունություն կարող է առաջանալ ինչպես ֆինանսական համակարգի ներքին գործընթացների խաթարման, այնպես էլ երկրի ներսում ու համաշխարհային տնտեսությունում անբարենպաստ մակրոտնտեսական զարգացումների, խոշոր փոխառուների ու պարտատերերի հետ կապված խնդիրների, տնտեսական քաղաքականության կամ ենթակառուցվածքների փոփոխությունների հետևանքով:*

*Ֆինանսական կայունության ապահովումը ենթադրում է ռիսկերի հիմնական աղբյուրների, ֆինանսական ռիսկերի ոչ ճիշտ կառավարման, ակտիվների գների ձևավորման անարդյունավետության բացահայտում և համապատասխան քաղաքականության իրականացում:*

## ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի *Ֆինանսական կայունության հաշվետվությունը* պատրաստվում է կիսամյակային պարբերականությանը և ներկայացնում է ֆինանսական համակարգի կայունության վրա ազդող հիմնական ռիսկերի, ինչպես նաև ֆինանսական համակարգի՝ այդ ռիսկերին դիմակայելու ունակության ընդհանուր գնահատականը: Ֆինանսական կայունության վերլուծությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման միջոցով Կենտրոնական բանկը նպատակ ունի շահագրգիռ կողմերի ուշադրությունը հրավիրելու այն ռիսկերի, իրադարձությունների վրա, որոնք կարող են վտանգել ՀՀ ֆինանսական կայունությունը, ինչպես նաև նախաձեռնելու այդ ռիսկերի կառավարման, նվազեցման վերաբերյալ քննարկումներ:

ՀՀ կենտրոնական բանկի խնդիրներից է ֆինանսական համակարգի կայունության ու բնականոն գործունեության ապահովումը, որը փոխկապակցված է Կենտրոնական բանկի՝ գների կայունության ապահովման խնդրի հետ: Ֆինանսական համակարգի անկայուն վիճակը կարող է խոչընդոտել դրամավարկային քաղաքականության իրականացմանը և արդյունավետությանը: Միևնույն ժամանակ, դրամավարկային և մակրոտնտեսական կայունությունը նպաստում է ֆինանսական կայունությանը սպառնացող ռիսկերի նվազեցմանը: Ֆինանսական համակարգը կարևոր դեր է խաղում ընդհանուր տնտեսական համակարգում, և անհրաժեշտ է, որ ֆինանսական համակարգը պահպանի գործընթացների անընդհատությունը և կայունությունը՝ այդպիսով նպաստելով ընդհանուր տնտեսության բնականոն աճին:

Ֆինանսական կայունությունը վտանգող փոփոխությունների և տատանումների վաղաժամկետ բացահայտման համար ՀՀ կենտրոնական բանկը իրականացնում է ֆինանսական կայունության շարունակական մշտադիտարկում (մոնիթորինգ), վերլուծություն: Հաշվետվությունում ներկայացված են մակրոմիջավայրում և ֆինանսական համակարգում դրսևորված ռիսկերը, դրանց ազդեցությունը տնտեսության ու ֆինանսական համակարգի տարբեր հատվածների զարգացումների վրա:

ՀՀ ֆինանսական կայունության վրա ազդող ռիսկերը կարող են ծագել ներքին տնտեսությունում, երկրից դուրս՝ արտաքին տնտեսությունում, և բուն ֆինանսական համակարգում: Այս առումով ֆինանսական կայունության ապահովման կարևորագույն նախապայմաններն են.

- կայուն զարգացող ներքին և արտաքին մակրոտնտեսական միջավայր՝ բավականաչափ վարկունակ տնային տնտեսություններով և ձեռնարկություններով,
- արդյունավետ գործող ֆինանսական համակարգ՝ խելամիտ ու կառավարելի սահմաններում գտնվող ռիսկերով,
- ֆինանսական համակարգի գործառույթների իրականացմանը նպաստող և անխափան գործող ֆինանսական ենթակառուցվածքներ:

Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ ֆինանսական կայունությանը խոչընդոտող հավանական ռիսկերը հաշվետվությունում ներկայացված են 5 հիմնական ուղղություններով.

- համաշխարհային տնտեսության զարգացումներից ածանցվող ռիսկեր,
- ՀՀ մակրոտնտեսական միջավայրի զարգացումներից ածանցվող ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումներից ածանցվող ռիսկեր,

- ՀՀ ֆինանսական հաստատություններից ածանցվող ռիսկեր,
  - ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքներից ածանցվող ռիսկեր:
- Հաշվետվությունում ներկայացված են այդ ոլորտներում դրսևորված ռիսկերը և դրանց հնարավոր ազդեցությունը տնտեսության և ֆինանսական համակարգի բոլոր հատվածների զարգացումների վրա: Ընդ որում՝ ՖԿ հաշվետվությունում հիմնականում կարևորվում են բանկային համակարգի ռիսկերն ու զարգացման ուղղությունները, քանի որ ՖՀ ակտիվների գրեթե 90%-ը կազմում են առևտրային բանկերի ակտիվները, հետևաբար բանկային համակարգի իրավիճակով են հիմնականում պայմանավորվում ընդհանուր ֆինանսական կայունության մակարդակը և զարգացման ուղղությունները:

## ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

*Ֆինանսական կայունությունը խոցող ռիսկերի համախումբը նախորդ տարվա համեմատությամբ չի փոխվել, թեև հիմնական ռիսկերն ավելացել են*

*Ներքին տնտեսության և, համապատասխանաբար, ֆինանսական կայունության վրա ազդող արտաքին հիմնական ռիսկերն ու հետագա զարգացման հետ կապված անորոշությունները ընթացիկ տարում պահպանվել են, իսկ միջազգային շուկաներում արդյունաբերական մետաղների գների նվազումը, արդյունաբերության ճյուղի ցածր աճը և վատ եղանակային պայմանները որոշակիորեն նպաստել են ներքին տնտեսական աճի դանդաղմանը: Բացասական զարգացումներին զուգընթաց, ներքին տնտեսությունում դրսևորվել են մի շարք դրական միտումներ: Մասնավորապես՝ արտահանման ծավալների աճը դրական է անդրադարձել արտահանող ձեռնարկությունների վարկունակության վրա, իսկ մասնավոր տրանսֆերտների և գործոնային եկամտի աճի արդյունքում պահպանվել է տրանսֆերտներ ստացող տնային տնտեսությունների վարկունակությունը:*

*2013 թ. առաջին կեսն աչքի է ընկել համաշխարհային տնտեսության մարտահրավերների շարունակականությամբ*

Համաշխարհային տնտեսության աճի վերականգնումը շարունակվել է նաև ընթացիկ կիսամյակում, թեև գերակշռել են նվազման ուղղությամբ ռիսկերը: Ջարգացած երկրներում պարտքային հիմնախնդիրները վերջնական լուծում դարձյալ չեն ստացել, և մի շարք երկրների պարտքային դժվարությունները միջազգային ֆինանսական շուկաներում տատանումների պատճառ են հանդիսացել: Ջարգացող երկրներում կարծես ամրապնդվել է տնտեսական աճի դանդաղման միտումը, ինչն էլ իր հերթին նպաստել է մի շարք բորսայական ապրանքատեսակների գների նվազմանը:

Բորսայական ապրանքների գների աճ արձանագրվել է հիմնականում տարեսկզբին, այնուհետև, զարգացող երկրների տնտեսական աճի դանդաղմամբ և համաշխարհային տնտեսությունում առկա անորոշություններով պայմանավորված, աճի միտումը փոխվել է նվազման:

*Դրամավարկային մարմինները շարունակել են մեղմ դրամավարկային քաղաքականությունը*

Ջարգացող և զարգացած երկրների դրամավարկային մարմինները շարունակել են որպես կիրառվող քաղաքական առաջնային խնդիր դիտարկել տնտեսական աճի խթանումն ու ամրապնդումը: Վերջիններս կիսամյակի ընթացքում շարունակել են իրականացնել մեղմ դրամավարկային քաղաքականություն և երաշխավորել տոկոսադրույքների նույն մակարդակի պահպանումը՝ հավանական փոփոխումը կապելով հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների որոշակի մակարդակների հետ:

ՀՀ հիմնական առևտրային գործընկեր Եվրոմիության որոշ երկրներում և Ռուսաստանում տնտեսական զարգացումները սպասվածից ավելի բացասական են եղել, թեև դրանց ազդեցությունը ներքին տնտեսության վրա չի զգացվել, մասնավորապես՝ կիսամյակի ընթացքում արձանագրվել է ինչպես արտահանման, այնպես էլ մասնավոր դրամական փոխանցումների ծավալների աճ (մանրամասն տե՛ս «Համաշխարհային տնտեսության զարգացումները» բաժնում):

Ըստ 2013 թ. առաջին վեց ամիսների տվյալների՝ ՀՀ տնտեսական աճը կազմել է 3.5% (2012-ի առաջին կիսամյակում՝ 6.5%): Աճի տեմպի նվազումը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության ճյուղի ցածր աճով և շինարարության ճյուղի նվազմամբ:

Չնայած համաշխարհային տնտեսության խնդրահարույց զարգացումներին՝ ՀՀ-ում արձանագրվել է մասնավոր տրանսֆերտների, գործոնային եկամտի և արտաքին առևտրաշրջանառության աճ: Նշված միտումները նպաստել են տնտեսությունում եկամտոտների աճին, հետևաբար ամրապնդել ձեռնարկությունների և տնային տնտեսությունների ֆինանսական կայունությունը (մանրամասն տե՛ս «Ձարգացումները Հայաստանի մակրոտնտեսական միջավայրում» բաժնում):

Կիսամյակի ընթացքում վարկային պորտֆելի աճի տեմպերի դանդաղմանը զուգընթաց դիտարկվել է կապիտալի համարժեքության նվազման տեմպի դանդաղում: ՀՀ բանկային համակարգը ամբողջ կիսամյակում պահպանել է նորմատիվային պահանջներից բարձր կապիտալի համարժեքության ու իրացվելիության ցուցանիշներ, կառավարելի շուկայական ռիսկեր:

Նվազել է զուտ տոկոսային մարժան, որը մասամբ պայմանավորել է բանկային համակարգի շահութաբերության մակարդակի նվազումը:

Ֆինանսական համակարգում առկա ռիսկերը թեև որոշ դեպքերում ցուցաբերել են աճի միտում, սակայն շարունակում են մնալ կառավարելի շրջանակներում՝ չառաջացնելով ռիսկեր ֆինանսական կայունության համար (մանրամասն տե՛ս «ՀՀ ֆինանսական հաստատությունների կայունությունը» և «Ֆինանսական կայունությունը ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքներում»):

*Գործընկեր երկրներում տնտեսական զարգացումները չի կարելի որակել դրական, թեև դրանց ազդեցությունը ներքին տնտեսության վրա շոշափելի չի եղել*

*Ներքին տնտեսական աճը զիջել է նախորդ տարվա ցուցանիշին*

*Տնտեսությունում եկամտոտների աճն ապահովել է ավելի բարձր վարկունակություն*

*Շարունակվել է աշխուժությունը վարկային շուկայում, թեև աճի տեմպերը զիջել են նախորդ տարվա տեմպերին*

# 1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ <sup>1</sup>

## 1.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

*Համաշխարհային տնտեսության վերականգնումը  
շարունակվել է, թեև հիմնական ռիսկերը ահազանգող են  
եղել ողջ տարվա ընթացքում*

2013 թվականը սկսվել է առանց միջազգային շուկաներում կտրուկ տատանումների և լավատեսական սպասումներով: Եվրոպական պարտքային ճգնաժամը կարծես դրական տեղաշարժերի փուլ էր մտել, ԱՄՆ-ում բյուջետային հիմնախնդիրների հետաձգումը հնարավորություն էր տվել իրավասու մարմիններին գտնելու օպտիմալ լուծում՝ առանց էապես խոչընդոտելու տնտեսական վերականգնմանը, իսկ դեպի զարգացող երկրներ կապիտալ ներհոսքի վերականգնումը օգնելու էր հաղթահարել տնտեսական դանդաղումն այդ խմբի երկրներում:

Այնուամենայնիվ, համընդգրկուն անկայունության մի շարք գործոններ պահպանվում էին և ի հայտ եկան արդեն առաջին եռամսյակի ընթացքում: Մասնավորապես՝ իրադարձությունները Կիպրոսում կարծես հերթական հիշեցումն էին, որ խնդրահարույց երկրները շարունակում են համակարգային անկայունության պոտենցիալ աղբյուր հանդիսանալ:

Կիսամյակի երկրորդ կեսը բնութագրվել է առավել բացասական զարգացումներով: Ֆինանսական շուկաներում ավելացել է տատանողականությունը, զարգացող երկրներում տնտեսական դանդաղումը սկսել է դրսևորել արմատավորման միտումներ, իսկ պարտքային խնդիրներ ունեցող եվրոպական երկրների և զերմանական պետական պարտատոմսերի սպրեդը նկատելի աճել է:

Բացասական զարգացումների ներքո միջազգային կառույցները պարբերաբար նվազեցրել են համաշխարհային տնտեսական աճի կանխատեսումները, իսկ ապագա սպասումները դարձյալ նվազման ուղղությամբ են:

*2013 թվականի համաշխարհային տնտեսական աճի  
կանխատեսումը նվազեցվել է փաստացի բացասական  
զարգացումների ճնշման ներքո <sup>2</sup>*

2013 թ. համաշխարհային տնտեսական աճը ԱՄՆ կողմից կանխատեսվել է 3.1% (2012 թ. գնահատումը՝ 3.1%): Ջարգացած երկրներում տնտեսական աճը կշարունակի մնալ թույլ՝ 1.2%, իսկ զարգացող երկրներինը չի գերազանցի նախորդ տարվա ցուցանիշը և ակնկալվում է 5.0%-ի սահմաններում:

*2013 թ. առաջին կիսամյակը սկսվել է լավատեսական  
սպասումներով, սակայն հետագա զարգացումներն  
առավել մտահոգիչ են եղել*

Տարեսկիզբը նշանավորվել է պարտքային ռիսկերի նվազմամբ, ինչի մասին են վկայում պետական պարտատոմսերի տոկոսադրույքների որոշակի նվազումը և բանկային համակարգում ավանդների աճը, միջազգային բորսայական ինդեքսների աճը՝ որոշ երկրներում հասնելով ընդհուպ մինչև 2011 թ. բարձր մակարդակներին, ինչպես նաև մեղմ դրամավարկային քաղաքականության ներքո կապիտալ հոսքերի ակտիվացմամբ և «ռիսկի ախորժակի» վերականգնմամբ: Դրական զարգացումների պայմաններում ԱՄՆ-ն 2012 թ. հունվարին հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները վերանայել է աճի ուղղությամբ:

<sup>1</sup> Միջազգային զարգացումների և կանխատեսումների համար հիմք է ծառայել IMF, World bank, Economist Intelligence unit, Financial times, Bloomberg, RBC, The institute of international finance և այլ աղբյուրների տեղեկատվությունը:

<sup>2</sup> ԱՄՆ բոլոր կանխատեսումներն ու գնահատումները վերցված են "World economic outlook update 2013 July" պարբերականից:



**2012 - 2013 թթ. համաշխարհային տնտեսական աճի գնահատման վերանայումները ԱՄՖ կողմից**

Ցուցանիշ (տնտեսական աճ)	30.06.12 թ. կամիատեսուում 2012 թ. համար	30.11.12 թ. դրությամբ 2012 թ. կամիատեսուում	30.01.13 թ. դրությամբ 2012 թ. գնահատում	30.01.13 թ. դրությամբ 2013 թ. կամիատեսուում	30.04.13 թ. դրությամբ 2013 թ. կամիատեսուում	30.07.13 թ. դրությամբ 2013 թ. կամիատեսուում
Համաշխարհային տնտեսություն	3.3	3.3	3.1	3.5	3.3	3.1
Զարգացած երկրներ	1.3	1.3	1.3	1.4	1.3	1.2
ԱՄՆ	2.0	2.2	2.3	2.0	1.9	1.7
Եվրոգոտի	-0.3	-0.4	-0.4	-0.2	-0.4	-0.6
Զարգացող երկրներ	5.3	5.3	5.1	5.5	5.3	5.0
ԱՊՀ	4.1	4.0	3.6	3.8	3.4	2.8
Ռուսաստան	4.0	3.7	3.6	3.7	3.4	2.5
Չինաստան	8.0	7.8	7.7	8.2	8.1	7.8


Առաջին եռամսյակի վերջին Կիպրոսի ֆինանսական դժվարությունները, սակայն, վկայությունն էին այն բանի, որ չնայած դրական զարգացումներին, եվրոպական պարտքային ճգնաժամը հաղթահարված չէ և շարունակում է մնալ համաշխարհային տնտեսության վերականգնման հիմնական խոչընդոտներից մեկը: Հաշվի առնելով համաշխարհային տնտեսության աճը խոչընդոտող հիմնախնդիրների կենսունակությունը՝ արդեն երկրորդ եռամսյակի սկզբին միջազգային կազմակերպությունները համաշխարհային տնտեսության, զարգացած ու զարգացող երկրների տնտեսական աճի կանխատեսումները վերանայել են նվազման ուղղությամբ: Եվրոպական պարտքային ճգնաժամի և զարգացած երկրների տնտեսական վերականգնման անորոշությունների հետ մեկտեղ, առաջ է եկել նաև զարգացող երկրների տնտեսական աճի դանդաղման ու այդ միտումների հետագա պահպանման ռիսկ, ինչն իր հերթին լրացուցիչ կարգելակի համաշխարհային տնտեսության աճը:

Թեև տարեսկզբից նկատելի է եղել տնային տնտեսությունների սպառման աճ և գործազրկության նվազում (հունիսի տվյալներով՝ 7.6%), այնուամենայնիվ իրավիճակը հարկաբյուջետային հատվածում բացասաբար է անդրադարձել տնտեսական աճի վրա: 2013 թ. առաջին կեսին ԱՄՆ ՀՆԱ աճի վրա բացասական ազդեցություն է ունեցել պետական ծախսերի 11.5%-ով կրճատումը: Ըստ պաշտոնական գնահատականների՝ մարտի 1-ին ուժի մեջ մտած պետական ծախսերի կրճատման ծրագիրը 2013 թ. տարեկան ՀՆԱ աճի տեմպը կնվազեցնի 0.6 տոկոսային կետով, ինչն իր բացասական ազդեցությունը կպահպանի նաև միջնաժամկետ հատվածում: ԱՄՖ-ն, իր հերթին, հորդորում է ԱՄՆ կառավարությանը մեղմել բյուջեի կրճատմանն ուղղված քաղաքականությունը՝ պոտենցիալ ՀՆԱ-ի նվազման պատճառներ չառաջացնելու նկատառումներից ելնելով:

2013 թ. տնտեսական աճը նվազման ուղղությամբ են վերանայել ինչպես Դաշնային պահուստային համակարգը, այնպես էլ ԱՄՖ-ն: Վերջինիս կանխատեսումներով՝ 2013 թ-ին ԱՄՆ տնտեսության աճը կկազմի 1.7%:

2013 թ. կշարունակվի Եվրոգոտու տնտեսական անկումը, որը կկազմի 0.6%: Տնտեսական ակտիվության վրա բացասական ազդեցություն են ունեցել նաև վարկավորման աճի ցածր տեմպերը: Մասնավորապես՝ առաջին կիսամյակում նվազել է ոչ ֆինանսա-

**Տնտեսական աճի ցուցանիշներն ըստ տարածաշրջանների**



\* Այս և հաջորդ գծապատկերներում աստղանիշով նշված ցուցանիշները ԱՄՖ գնահատումներն են (2013 թ. հուլիս):

**ԱՄՆ-ում արձանագրվել է չափավոր տնտեսական աճ**

**Եվրոգոտու ՀՆԱ աճի հիմնական ռիսկերն են՝ սպասվածից ավելի ցածր ներքին պահանջարկի մակարդակը և կառուցվածքային բարեփոխումների դանդաղ ընթացքը**

**Ջարգացող երկրների տնտեսական աճի դանդաղումը, ըստ ամենայնի, շարունակական կլինի**

կան կորպորացիաներին և տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճի տեմպը:

Ջարգացած երկրներում տնտեսական աճի ցածր մակարդակը և առկա անորոշությունները շարունակել են կապիտալ ներհոսքի ու համաշխարհային առևտրի միջոցով բացասաբար ազդել զարգացող երկրների տնտեսական ակտիվության վրա: Ջարգացող երկրների տնտեսական դանդաղումը, ըստ ամենայնի, պայմանավորել են ցածր արտաքին պահանջարկը, ապրանքատեսակների միջազգային գների ցածր մակարդակը, գնաճի բարձր մակարդակը, կապիտալ ներհոսքի համար սրվող մրցակցությունը:

Ջարգացող երկրների 2013 թ. տնտեսական աճը կանխատեսվում է 5.0%, ընդ որում՝ Չինաստանի տարեկան տնտեսական աճը, համաձայն ԱՄՅ-ի, կկազմի 7.8% (առաջին կիսամյակի տվյալներով աճը կազմել է 7.6%): Համանման միտումներ նկատվել են նաև այլ առանցքային զարգացող երկրներում:

Վերջին ցուցանիշները փաստում են, որ չնայած համաշխարհային տնտեսությունում առկա անորոշություններին՝ համաշխարհային առևտրի նվազման փուլը հաղթահարվել է, և սկսվել է վերականգնման փուլը, թեև աճի դանդաղ տեմպերով: Համաձայն ԱՄՅ տվյալների՝ համաշխարհային առևտրի ծավալների տարեկան աճը 2013 թ. կկազմի 3.1%՝ նկատելի արագանալով 2014 թ-ին՝ 5.4%:

Նշված աճը տարատեսակ դրսևորումներ է ունեցել ըստ առանձին երկրների: Մասնավորապես՝ Չինաստանում առևտրի, առավելապես արտահանման նվազում է նկատվել կիսամյակի երկրորդ կեսին (հունիսին արտահանումը նվազել է տ/տ 3.2%-ով): Միևնույն ժամանակ, ԱՄՆ-ում արձանագրվել է արտահանման ծավալների աճ (հունիսին տ/տ աճը կազմել է 2.5%), իսկ ներմուծումը նվազել է՝ ԱՄՆ առևտրային պակասուրդը կրճատելով մինչև 2009 թ. մակարդակը:

Տարեսկզբին արձանագրվել է հիմնական ապրանքատեսակների միջազգային գների կտրուկ աճ՝ պայմանավորված ինչպես որոշ ապրանքատեսակների շուկաներին բնորոշ զարգացումներով, այնպես էլ համաշխարհային տնտեսության զարգացման միտումներով: Սակայն, սկսած երկրորդ եռամսյակից, գրեթե բոլոր շուկաներում գները նվազել են՝ արձագանքելով համաշխարհային պահանջարկի նվազմանը և բացասական տրամադրվածություններին:


Տարեսկզբից դրսևորվել է նավթի գնի աճի միտում. փետրվարին՝ շուրջ 119 ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց, որից հետո այն կտրուկ նվազել է՝ հասնելով 96.7 ԱՄՆ դոլարի: Կիսամյակի միջինով Brent տեսակի նավթի գինը կազմել է 107 ԱՄՆ դոլար/բարել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 5.3%-ով:

Կարճաժամկետ հեռանկարում ակնկալվում է, որ էներգակիրների գները տարվա միջինով կպահպանվեն նույն մակարդակում, թեև աշխարհաքաղաքական գործոններով պայմանավորված՝ առկա են աճի ուղղությամբ բարձր ռիսկեր:

Տարեսկզբին համաշխարհային մասշտաբով սպասումների բարելավման ներքո արձանագրվել էր արդյունաբերական մետաղների գների աճ, որը, սակայն, հետագա ամիսներին չեզոքացվել է զարգացող երկրների տնտեսական աճի թուլացման միտումներով պայմանավորված: Մասնավորապես՝ պղնձի միջին կիսամյակային գինը կազմել է մոտ 7440 ԱՄՆ դոլար/տոննա՝ նա-

**Համաշխարհային առևտրի աճի միտումը շարունակվում է**

**Համաշխարհային առևտրի տարեկան տոկոսային աճը**



Աղբյուրը՝ ԱՄՅ:

**Ապրանքային շուկաներում զարգացումները հիմնականում համահունչ են եղել համաշխարհային տնտեսության զարգացման միտումներին**

**Նավթի միջազգային գները հատկապես զգայուն կլինեն աշխարհաքաղաքական զարգացումների նկատմամբ**

**Նավթի («բրենթ» տեսակի) գները**  
(ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց)



**Պղնձի գների շարժը մեծապես պայմանավորվել է զարգացող երկրների տնտեսական միտումներով**

խորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 8.5%-ով:

Կարճաժամկետ հեռանկարում, այլ հավասար պայմաններում, արդյունաբերական մետաղների միջազգային գները կշարունակեն պայմանավորված լինել զարգացող երկրների տնտեսական միտումներով, և էական աճ չի արձանագրվի:

Կիսամյակի ընթացքում հացահատիկի միջազգային գների դինամիկան գլխավորապես նվազող է եղել՝ պայմանավորված նոր մարքեթինգային տարվա բերքի վերաբերյալ սպասումներով:

2013 թ. առաջին կիսամյակում հացահատիկի միջին գինը կազմել է 8.6 ԱՄՆ դոլար/բուշել (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 13.0% աճ՝ պայմանավորված նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ցորենի գների ցածր մակարդակով):

Կարճաժամկետ հեռանկարում ցորենի միջազգային շուկայում գների էական տատանումներ չեն ակնկալվում:

2013 թ. առաջին կիսամյակում արձանագրվել է ոսկու գնի շարունակական նվազման միտում: Գնի նվազումը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ տնտեսության համեմատաբար դրական զարգացումներով, ինչը ստիպել է ներդրողներին «դուրս գալ» ոսկու շուկայից և ներդրումներ կատարել առավել բարձր եկամտաբերությամբ ակտիվներում:

2013 թ. առաջին կիսամյակում ոսկու միջազգային միջին գինը կազմել է 1490 ԱՄՆ դոլար՝ մեկ տրոյական ունցիայի դիմաց՝ նախորդ տարվա համեմատաբար նվազելով մոտ 10%-ով:

Կարճաժամկետ հեռանկարում համաշխարհային տնտեսության անկայուն վերականգնման մտավախությունների պահպանման պայմաններում ակնկալվում է ոսկու գների անփոփոխ մակարդակ:

2013 թ. գնաճային ճնշումները զարգացած և զարգացող երկրներում բարձր չեն եղել: ԱՄՅ գնահատումների համաձայն՝ զարգացած երկրներում տարեկան գնաճը կկազմի 1.5%, իսկ զարգացող երկրներում գները կաճեն 6.0%-ով, ընդ որում՝ երկու ցուցանիշներն էլ ցածր կլինեն նախորդ տարվա ցուցանիշներից:

Առանցքային երկրների իրավասու մարմինները 2013 թ. առաջին կիսամյակում շարունակել են ակտիվ լինել՝ խթանելով տնտեսական աճը ոչ միայն ցածր տոկոսադրույքներով, այլև քանակական խթանման ծրագրերով:

**Պղնձի գները**


(ԱՄՆ դոլար՝ 1 տոննայի դիմաց)



**Հացահատիկի գները նվազել են**

**Մուկի գները**


(1000 ԱՄՆ դոլար՝ 1 տոննայի դիմաց)



**Ոսկու նկատմամբ ներդրողների հետաքրքրությունը նվազել է, ինչն էլ գների անկման պատճառ է դարձել**

**Ոսկու գները**

(ԱՄՆ դոլար՝ մեկ տրոյական ունցիայի դիմաց)




**Հիմնական ապրանքատեսակների գների նվազումը ապահովել է թույլ գնաճային միջավայր**

**Թույլ գնաճային միջավայրի և անկայուն տնտեսական աճի պայմաններում առանցքային երկրները շարունակել են կիրարկել խթանող դրամավարկային քաղաքականություն**

**Հացահատիկի գները**


(ԱՄՆ դոլար՝ 1 բուշելի դիմաց)



Աղբյուրը՝ Bloomberg:

**Գնաճը մի շարք երկրներում**

%, տարեկան միջին



- ԱՄՆ
- Ռուսաստան
- Չինաստան
- Չարգացած երկրներ
- Չարգացող երկրներ


Աղբյուրը՝ ԱՄՅ:

## 1.2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐ

2013 թ. սկզբին միջազգային ֆինանսական շուկաներում հարաբերական անդորր էր, որն, ըստ էության, սկսվել էր դեռևս նախորդ տարեվերջին: Կիսրոսում տեղի ունեցած իրադարձությունները, սակայն, վերադարձրին հիմնարար լարվածության մթնոլորտը, ինչի ներքո մայիս-հունիս ամիսներին էապես ավելացել է տատանողականությունը ֆինանսական շուկաներում: Ջարգացած երկրներում աճել են երկարաժամկետ տոկոսադրույքները, իսկ խնդրահարույց երկրների պետական պարտատոմսերի սպրեդների շարունակական նվազման միտումը դարձյալ փոխվել է աճի ուղղությամբ: Ջարգացած երկրներում տոկոսադրույքների աճը և ակտիվների գների բարձր տատանողականությունը, ներքին տնտեսության դանդաղման հետ միասին, զարգացող երկրներում հանգեցրել են կապիտալի որոշակի արտահոսքի, ֆոնդային ինդեքսների նվազման և արժույթների արժեզրկման:

**Պարտքային հիմնախնդիրներ ունեցող երկրների և գերմանական պետական պարտատոմսերի տոկոսադրույքների սպրեդը աճել է**


**10 տարի ժամկետայնությամբ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը**



Աղբյուրը՝ Bloomberg Data Vane House:

**Հիմնական զարգացող և զարգացած բոլոր երկրների կենտրոնական բանկերը իրականացրել են մեղմ դրամավարկային քաղաքականություն**

**Կենտրոնական բանկերի տոկոսադրույքների քաղաքականությունը**



Աղբյուրը՝ Bloomberg Data Vane House:

Եվրոպական պարտքային հիմնախնդիրների ներքո ներդրողները շարունակել են նախընտրությունը տալ հիմնականում ամերիկյան, գերմանական և այլ բարձր իրացվելի պետական պարտատոմսերին, որոնք էլ կիսամյակի ընթացքում հիմնականում պահպանել են ցածր եկամտաբերություն: Միևնույն ժամանակ, խնդրահարույց երկրների և գերմանական պետական պարտատոմսերի տոկոսադրույքների սպրեդը, որը նախորդ տարի նվազել էր, դարձյալ նկատելի աճել է՝ փաստելով իրավիճակի՝ ոչ դրական ուղղությամբ զարգացման մասին:

Կիսամյակի ընթացքում համաշխարհային տնտեսության անկայուն աճի ու հիմնական տնտեսական մարտահրավերների պայմաններում հիմնական զարգացած և զարգացող երկրները շարունակել են իրականացնել ցածր տոկոսադրույքների քաղաքականություն:

Մասնավորապես՝ մակրոտնտեսական հեռանկարների վատթարացման, արդյունաբերության և ծառայությունների ոլորտների թույլ գործարար ակտիվության և աշխատաշուկայում ստեղծված իրավիճակի (առաջին եռամսյակի վերջին Եվրոգոտում գործազրկության մակարդակը կազմել է 12.1%) պարագայում ԵԿԲ-ն ստիպված էր հայտարարել տնտեսության աշխուժացմանը ուղղված դրամավարկային մի շարք գործիքների կիրառման մասին: Մայիսի 2-ին ԵԿԲ-ն նվազեցրել է մշտական հնարավորության վարկային տոկոսադրույքը 50 բազիսային կետով՝ հասցնելով 1%-ի, իսկ հիմնական վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 25 բազիսային կետով՝ հասցնելով ռեկորդային ցածր 0.5% մակարդակի: Մշտական հնարավորության ավանդային տոկոսադրույքը պահպանվել է 0% մակարդակում:

Միևնույն ժամանակ, 2013 թ. առաջին կիսամյակում Դաշնային պահուստային համակարգը (ԴՊՀ) շարունակել է վարել ընդլայնողական քաղաքականություն՝ նպաստելու համար տնտեսական աճին և գործազրկության նվազմանը: Մեղմ դրամավարկային քաղաքականության իրականացումը պայմանավորված է նաև գնաճային ճնշումների բացակայությամբ: Մասնավորապես, ԴՊՀ-ի համոզմամբ՝ երկարաժամկետ գնաճային սպասումները կայուն են և չեն գերազանցում ուղեմշային 2%-ը: Դաշնային պահուստային համակարգը այն հայտարարության հետ միասին, թե գնաճի ներկա տեմպերի պարագայում տոկոսադրույքները չեն բարձրացվի այնքան ժամանակ, քանի դեռ գործազրկության մակարդակը գերազանցում է 6.5%-ը, միևնույն ժամանակ նշել է նաև

քանակական խթանման ծրագրի ծավալների՝ մինչև տարեվերջ կրճատման հավանականության մասին:

Անգլիայի կենտրոնական բանկը ևս դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը պահպանել է ցածր՝ 0.5% մակարդակում, որը առաջիկայում չի փոփոխվի: Ակտիվների գնման ներկայիս մակարդակը անփոփոխ կմնա այնքան ժամանակ, քանի դեռ գործազրկության մակարդակը բարձր է 7%-ից:

Կիսամյակի ընթացքում Եվրոգոտու պարտքային հիմնախնդիրների տարաբնույթ զարգացումները, երկրների մակրոտնտեսական ցուցանիշները և իրականացվող քաղաքականությունները պայմանավորել են հիմնական արժույթների տատանողական դինամիկան:

ԱՄՆ դոլարի փոխարժեքը պարբերաբար արժեզրկվել և արժևորվել է եվրոյի նկատմամբ՝ պայմանավորված ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում տվյալ պահին տեղի ունեցող զարգացումներով:


Ջարգացած երկրներում տնտեսական դանդաղումը և կապիտալ հոսքերը հանգեցրել են վերջիններիս արժույթների նկատմամբ արժեզրկման ճնշումներ: Արժեզրկման միտումն ավելի է ընդգծվել Դաշնային պահուստային համակարգի՝ ակտիվների գնման ծրագրի կրճատման մտադրությունների բարձրաձայնման պարագայում:

Ջարգացած և զարգացող երկրների բորսայական ինդեքսները, տնտեսական զարգացումներին համապատասխան, եղել են տատանողական տարեվերջի համեմատությամբ արձանագրելով որոշակի աճ:

Բազային ցածր տոկոսադրույքները և համաշխարհային տնտեսական անկայունությունները պայմանավորել են միջբանկային տոկոսադրույքների ցածր մակարդակը:


Դեպի զարգացող երկրներ կապիտալ ներհոսքի աճ չի դիտարկվել: Թույլ կապիտալ ներհոսքի հիմքում հիմնականում զարգացող երկրների տնտեսական դանդաղման միտումներն են և զարգացած երկրների, հատկապես ԱՄՆ-ի ծրագրվելիք քաղաքականությունը: Համաձայն Միջազգային ֆինանսների ինստիտուտի գնահատումների՝ կապիտալ ներհոսքը զարգացող երկրներ 2013 թ. կկազմի 1145 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 36 մլրդ-ով:

**Հիմնական արժույթները կիսամյակի ընթացքում տատանողական են եղել**



Աղբյուրը՝ ԵԿԲ:

**Բորսայական ինդեքսների և միջբանկային տոկոսադրույքների շարժը համահունչ է եղել միջազգային զարգացումներին**



Աղբյուրը՝ Bloomberg Data Vane House:

**Ներդիր**

**Տնտեսական զարգացումները Ռուսաստանի Դաշնությունում**

2013 թ. առաջին կիսամյակում Ռուսաստանի Դաշնության տնտեսությունում արձանագրվել է աճի դանդաղում. տ/տ տնտեսական աճը կազմել է 1.4%, տարեկան աճի կանխատեսումը 1.8% է: 2013 թ. առաջին կեսի, ինչպես և նախորդ տարվա տնտեսական թույլ ակտիվության հիմքում հիմնականում համաշխարհային տնտեսության բացասական միտումների ներքո ներդրումային պահանջարկի նվազումն է, ինչպես նաև արդյունաբերության դանդաղ աճը և արտահանման նվազումը:

Առաջին կիսամյակում արդյունաբերության տ/տ աճը կազմել է ընդամենը 0.1%, ընդ որում՝ վերամշակող արդյունաբերությունում աճ չի արձանագրվել: Նույն ժամանակահատվածում նվազում է արձանագրվել շինարարության ոլորտում՝ 1.9%: Համեմատաբար դրական են եղել զարգացումները առևտրի հատվածում՝ 3.7% աճ:

Ի տարբերություն իրական հատվածի զարգացումների՝ բնակչության եկամուտների փոփոխությունները դրական են եղել: Մասնավորապես՝ իրական տնօրինվող եկամուտը տ/տ աճել է 5.9%-ով, ընդ որում՝ իրական աշխատավարձի աճը կազմել է 4.3%: Գործազրկության մակարդակը նախորդ տարվա համեմատ որոշակի աճել է՝ կազմելով տնտեսապես ակտիվ բնակչության 5.7%-ը:

Համաշխարհային տնտեսական աճի դանդաղ տեմպերը, հատկապես Չինաստանի և այլ գործընկեր երկրների պահանջարկի նվազումը, բացասաբար են անդրադարձել արտահանման տեմպերի վրա: Մասնավորապես՝ տարվա առաջին չորս ամիսներին արտահանման ծավալները տ/տ նվազել են 5.2%-ով, մինչդեռ ներմուծման ծավալները տ/տ աճել են 3.8%-ով:

2013 թ. առաջին կիսամյակում շարունակվել է կապիտալի արտահոսքը, որն առաջին եռամսյակում կազմել է 25.8 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ տարվա կտրվածքով կանխատեսվում է մինչև 70 մլրդ ԱՄՆ դոլարի կապիտալ արտահոսք (2012 թ-ին՝ 56.8 մլրդ):

Օգոստոսի տվյալներով գնաճը գերազանցել է թույլատրելի միջակայքի վերին սահմանը և կազմել 6.5%:

Հաշվի առնելով գնաճային միջավայրը և տնտեսական ակտիվության ցածր մակարդակը՝ Ռուսաստանի կենտրոնական բանկը կիսամյակի ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույքը պահպանել է անփոփոխ՝ 8.25% մակարդակում:

2013 թ. առաջին կիսամյակի տվյալներով բանկային համակարգի ակտիվներն առաջին 5 ամիսներին տ/տ ավելացել են 20%-ով, իսկ կապիտալը՝ համապատասխանաբար 17.1%-ով: Միևնույն ժամանակ, տնտեսության վարկավորման ծավալներն ավելացել են 13.9%-ով, իսկ բնակչության վարկավորման ծավալները՝ 39.1%-ով: Վատորակ վարկերի կշիռը կազմել է 6.2%՝ տարեվերջի համեմատ աճելով 0.2 տոկոսային կետով:

## ԱՄՓՈՓՈՒՄ

2013 թ. առաջին կիսամյակում ֆինանսական շուկաներում ձևավորված լարվածության և հիմնական մարտահրավերների շարունակականության պայմաններում արձանագրվել է համաշխարհային տնտեսության դանդաղ և անկայուն վերականգնում:

Չնայած տարեսկզբին առկա լավատեսական տրամադրություններին՝ կիսամյակի ընթացքում գերակշռող են եղել բացասական զարգացումները: Ճգնաժամը եվրոգոտում դեռ մոտ չէ իր հանգուցալուծմանը, ԱՄՆ-ի տնտեսական դրական միտումներին խոչընդոտում է հարկաբյուջետային համախմբումը, զարգացող երկրներում տնտեսական աճը շարունակում է դանդաղել, իսկ ապրանքային շուկաներում հիմնականում գների նվազման միտում է արձանագրվում:

Տնտեսական մարտահրավերներին գումարվել են նաև քաղաքականները: Մասնավորապես՝ քաղաքական լարվածությունը Սիրիայում և դրա հնարավոր տարածումը համաշխարհային տնտեսական հետագա զարգացման ուղղությունների առանցքային գործոններից են:

Համաշխարհային տնտեսությունից փոխանցվող հիմնական հնարավոր ռիսկերից են շարունակում մնալ եվրոպական երկրների անկայուն աճի պայմաններում թույլ մասնավոր պահանջարկը և զարգացող երկրների տնտեսական դանդաղման պայմաններում արդյունաբերական մետաղների գների հետագա նվազման հավանականությունը: Ազդեցության մյուս օղակը Ռուսաստանի տնտեսությունն է, որում նկատելի են տնտեսական դանդաղման միտումներ:

## 2. ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ<sup>3</sup>

### 2.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

2013 թ. առաջին կիսամյակում համաշխարհային տնտեսության անորոշություններն ու ֆինանսական շուկաների տատանումները Հայաստանի ներքին տնտեսության վրա էական բացասական ազդեցություն չեն ունեցել, թեև արձանագրվել է արտաքին հատվածից բխող հիմնական ռիսկերի աճի միտում:

Ներքին տնտեսությունում տնտեսական աճը դանդաղել է՝ պայմանավորված մասնավոր սպառման աճի տեմպերի դանդաղմամբ և մասնավոր ներդրումների ծավալների կրճատմամբ: Միևնույն ժամանակ, արձանագրվել է մասնավոր դրամական միջոցների ներհոսքի և արտահանման ծավալների աճ:

Համաձայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2013 թվականի առաջին կիսամյակում Հայաստանի տնտեսական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է և կազմել 3.5%, ինչը պայմանավորվել է հիմնականում շինարարության ճյուղի անկմամբ և մշակող արդյունաբերության ճյուղի դանդաղ աճի տեմպերով:

Կիսամյակի ընթացքում արդյունաբերության ճյուղի ավելացված արժեքի աճը կազմել է տ/տ 1.3%՝ հիմնականում պայմանավորված հանքագործական արդյունաբերության ու վերամշակող ճյուղի աճով:


Գյուղատնտեսության աճը կազմել է տ/տ 3.5%: Նախորդ տարվա համեմատ աճի դանդաղումը պայմանավորված է նախորդ տարի ձևավորված բարձր բազայով: Գյուղատնտեսության ճյուղի աճին նպաստել է և՛ բուսաբուծության, և՛ անասնապահության ենթաճյուղերի աճը:

Շինարարության ճյուղի ավելացված արժեքն առաջին կիսամյակում նվազել է տ/տ 19.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է կազմակերպությունների հաշվին իրականացվող շինարարության ծավալների զգալի կրճատմամբ, մաս է կապես նվազել են միջազգային վարկերի հաշվին իրականացված շինարարության ծավալները: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել են բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալները:

Ծառայությունների ոլորտի ավելացված արժեքի աճը 2013 թ. առաջին կիսամյակում կազմել է տ/տ 7.9 %՝ պայմանավորված առևտրի և այլ ծառայությունների ծավալների աճով:

ՀՆԱ ծախսային բաղադրիչների տեսանկյունից, առաջին կիսամյակի տվյալներով, մասնավոր սպառումը տ/տ աճել է 3.4%-ով, իսկ մասնավոր ներդրումները նվազել են 13.0%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ մասնավոր սպառման դանդաղման միտումը պայմանավորվել է 2012 թ. գյուղատնտեսության ճյուղում արձանագրված մեծ աճի տնտեսական ազդեցությունների աստիճանական վերացմամբ և վարկավորման ծավալների աճի տեմպի դանդաղմամբ: Ներդրումների վարքագիծը պայմանավորվել է շինարարության ճյուղի զարգացումներով:

Տնտեսության հիմնական ճյուղերի տարեկան աճը




Աղբյուրը՝ ՀՀ ԿՔ:

<sup>3</sup> ՀՀ մակրոտնտեսական միջավայրի զարգացումները մանրամասն տես «2013 թ. գնաճի հաշվետվություն» (Դրամավարկային քաղաքականության 2013 թ. 2-րդ եռամսյակի ծրագիր, Դրամավարկային քաղաքականության 2013 թ. 1-ին եռամսյակի ծրագրի կատարման հաշվետվություն):



**Տնտեսության հիմնական ճյուղերի վարկավորման աճը**



\* Գրաֆիկում «Ծառայություններ» ճյուղը ներառում է արևտրի և ծառայության այլ հատվածների ցուցանիշների հանրագումարը:

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Պետական սպառումը տ/տ ավելացել է 9.2%-ով, իսկ պետական ներդրումները տ/տ նվազել են 1.9%-ով:

2013 թ. առաջին կիսամյակի տվյալներով տարեվերջի համեմատ վարկային շուկայում արձանագրվել է 5.2% աճ: Վարկավորման աճի նվազման հիմքում, ըստ ամենայնի, վարկային շուկայի հագեցվածությունն է, և, ամենայն հավանականությամբ, բանկերը հետագայում նոր ֆինանսական գործիքների ներդրման քայլեր կձեռնարկեն:

Վարկային պորտֆելի աճ գրանցվել է տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ արդյունաբերության, որտեղ վարկային պորտֆելը նվազել է 8.7%-ով՝ բացառապես պայմանավորված մեկ ձեռնարկության վարկի հաշվապահական ձևակերպման փոփոխմամբ (մանրամասն տես «ՀՀ ֆինանսական հաստատությունների կայունությունը» ենթաբաժնում): Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ չաշխատող վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային պորտֆելում աճել է 2.1 տոկոսային կետով և կազմել 5.6%: Վարկային ներդրումների ճյուղային բաշխվածության տեսանկյունից՝ չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է շինարարությանը, հանրային սննդին ու սպասարկման այլ ոլորտներին և գյուղատնտեսությանը տրամադրված վարկերում:


2013 թ. առաջին եռամսյակի վերաբերյալ ՀՀ ԿԲ կողմից անցկացվող հարցումների համաձայն՝ բաղադրյալ տնտեսական ինդեքսներն ունեցել են զարգացման տարբեր միտումներ: Մասնավորապես՝ գործարար ակտիվության ցուցանիշը եռամսյակի նկատմամբ նվազել է տ/տ 0.8%-ով, ինչը վկայում է տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղման մասին, միևնույն ժամանակ բոլոր ոլորտներում պահպանվել են լավատեսական սպասումները:<sup>4</sup>

Գործարար միջավայրի ցուցանիշը աճել է տ/տ 7.4%-ով: Գործարար միջավայրի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ծառայությունների ոլորտում, ինչը 9.9 տոկոսային կետով բարձր է նախորդ եռամսյակի համեմատ:

**ՀՀ արտաքին պետական պարտքը բնութագրող որակական ցուցանիշներ**

Ցուցանիշ	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013 I կիս.
Պարտք/ՀՆԱ (սահման 50%)	22.3%	18.2%	14.0%	13.6%	35.7%	34.2%	36.4%	37.6%	37.3%
Պարտք/ արտահանում	77.6% (նվազ պարտքի բեռ)	79.8% (նվազ պարտքի բեռ)	81.6% (նվազ պարտքի բեռ)	89.8% (նվազ պարտքի բեռ)	221.7% (միջին պարտքի բեռ)	170.31% (միջին պարտքի բեռ)	148.0% (նվազ պարտքի բեռ)	150.0% (նվազ պարտքի բեռ)	142.0% (նվազ պարտքի բեռ)
Պարտքի սպասարկում/ արտահանում	4.6% (նվազ պարտքի բեռ)	4.2% (նվազ պարտքի բեռ)	2.9% (նվազ պարտքի բեռ)	3.1% (նվազ պարտքի բեռ)	6% (նվազ պարտքի բեռ)	5.0% (նվազ պարտքի բեռ)	4.2% (նվազ պարտքի բեռ)	9.9% (նվազ պարտքի բեռ)	7.8% (նվազ պարտքի բեռ)
Տոկոսավճար/ արտահանում	0.9% (նվազ պարտքի բեռ)	0.7% (նվազ պարտքի բեռ)	0.6% (նվազ պարտքի բեռ)	0.7% (նվազ պարտքի բեռ)	2.0% (նվազ պարտքի բեռ)	2.4% (նվազ պարտքի բեռ)	2.1% (նվազ պարտքի բեռ)	2.3% (նվազ պարտքի բեռ)	1.0% (նվազ պարտքի բեռ)

**ՀՆԱ ծախսային բաղադրիչները (տեսակարար կշիռը ՀՆԱ-ում)**



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

<sup>4</sup> Գործարար ակտիվության և գործարար միջավայրի ցուցանիշ (ԳԱՑ, ԳԱՑ) <https://www.cba.am/am/sitepages/statsseabci.aspx>



2013թ. առաջին կիսամյակում, տարեվերջի համեմատ, ՀՀ արտաքին պետական պարտքը նվազել է 4.5%-ով և կազմել 3713.5 մլն դոլար: 2013 թ. առաջին կիսամյակի տվյալներով պարտք/ՀՆԱ<sup>5</sup> հարաբերակցությունը 37.3% է, ինչը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է: Համաձայն Ֆինանսների նախարարության տվյալների՝ արտաքին պետական պարտքի կառուցվածքում նշանակալի փոփոխություններ չեն եղել: Արտոնյալ վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր պարտքի ծավալում 55.6% է, միևնույն ժամանակ, նախորդ տարեվերջի համեմատ շարունակել է նվազել լողացող տոկոսադրույքով վարկերի կշիռը և կազմել է 34.4 %:

2013 թ. առաջին կիսամյակի ընթացքում հարկային վարչարարության բարելավման արդյունքում արձանագրվել են ՀՀ պետական բյուջեի մասով դրական զարգացումներ:

Համաձայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ պետական բյուջեի եկամուտները տ/տ ավելացել են 20.4%-ով՝ կազմելով 505 293.2 մլն դրամ, ինչը 100.6%-ով ապահովել է ՀՀ կառավարության առաջին կիսամյակի ծրագրի կատարումը: Նման աճի տեմպը պայմանավորված է հարկային եկամուտների բարձր աճով՝ 21.1%, ինչին առավելապես նպաստել են ավելացված արժեքի հարկի հավաքագրումից ստացված եկամուտները: Ծախսերն ավելացել են շուրջ 8.0%-ով և կազմել 458093.3 մլն դրամ: Արդյունքում ձևավորվել է 47199.9 մլն դրամի հավելուրդ, ինչը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով, ծրագրի կատարման ժամկետների կամ ծավալների փոփոխությամբ: Պետական բյուջեի ծախսերի համեմատ եկամուտների համեմատաբար բարձր աճի պարագայում պետբյուջեի հավելուրդը կազմել է ՀՆԱ 1.2%-ը:

2013 թ. առաջին կիսամյակը, հատկապես կիսամյակի երկրորդ կեսը, աչքի է ընկել ձևավորված բարձր գնաճային միջավայրով՝ պայմանավորված այդ ժամանակահատվածում գյուղատնտեսության ճյուղի զարգացումներով և որոշ ծառայությունների գների աճով: Արդյունքում 12-ամսյա գնաճը հունիսին կազմել է 6.5%:

## 2.2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ


Համաձայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2013 թ. առաջին կիսամյակում արտաքին ապրանքաշրջանառությունն ավելացել է տ/տ 0.8 %-ով և կազմել 2.5 մլրդ ԱՄՆ դոլար: Ցածր աճը հիմնականում պայմանավորված է ներմուծման ծավալների նվազմամբ:

ԿԲ տվյալների համաձայն՝ 2013 թ. առաջին կիսամյակի ընթացքում ապրանքների ներմուծումը նվազել է տ/տ 1.4%-ով և կազմել 1.7 մլրդ ԱՄՆ դոլար, ընդ որում, ԿԲ գնահատումների համաձայն, ներմուծման իրական ծավալները նվազել են 1.1%-ով: Հատկապես նվազել են «Պատրաստի սննդի արտադրանք», «Հանքահումքային արտադրանք», «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալները:

Ապրանքների արտահանման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել են տ/տ


<sup>5</sup> Այս և հետագա բաժիններում ցանկացած ցուցանիշի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում հաշվարկելիս ՀՆԱ-ն ներառվել է որպես նախորդ տարվա երկրորդ կիսամյակի և հաշվետու տարվա առաջին կիսամյակի փաստացի տվյալների համընթացումը:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդ (-) / հավելուրդ (+)




Աղբյուրը՝ ԱՎԾ:

ՀՀ ներմուծումն ըստ ապրանքախմբերի կիսամյակային (մլն ԱՄՆ դոլար)




ՀՀ արտահանումն ըստ ապրանքախմբերի կիսամյակային (մլն ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

**Հայաստանի արտաքին առևտրի բաշխվածությունը ըստ երկրների (30.06.2013 թ. դրությամբ)**



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

7.7%-ով և կազմել 807.1 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ արտահանման իրական աճը կազմել է 9.9%:

Արտահանման կառուցվածքում հիմնականում ավելացել են «Պատրաստի սննդի արտադրանք», «Հանքահումքային արտադրանք», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ծավալները:

Արտահանման աճին զուգընթաց ներմուծման նվազման պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 544.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 29.6%-ով: Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցությունը 2013 թ. հունվար-հունիսին կազմել է -13.8%՝ նախորդ տարվա -19.8%-ի փոխարեն:

Ըստ աշխարհագրական բաշխվածության՝ ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքում պահպանվել են խոշոր կենտրոնացումները. հիմնական գործընկեր շարունակում են համարվել Ռուսաստանի Դաշնությունը և ԵՏՄ երկրները: Համաձայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ արտահանման կառուցվածքում 2.2 տոկոսային կետով աճել է ԱՊՀ անդամ երկրների կշիռը, միևնույն ժամանակ 4.8 տոկոսային կետով նվազել է Եվրոպական տնտեսական միության երկրների կշիռը: Արտահանման կառուցվածքում առավել զգալի է եղել Հայաստանից Բելգիա արտահանման աճը՝ 32.7%:

Արտահանումը շարունակում է կենտրոնացված մնալ նաև ըստ ապրանքատեսակների, ինչն էլ մեծացնում է հանքագործական և սննդի ճյուղերի խոցելիությունը կոնկրետ երկրում գլոբալ տնտեսության հավանական ցնցումներից:

Ներմուծման կառուցվածքում հիմնական գործընկեր երկրներ են շարունակում մնալ ԵՏՄ և ԱՊՀ երկրները, որոնց միասնական կշիռն աճել է ընդամենը 0.4 տոկոսային կետով և կազմել 49.5%:


**2.3. ԶՈՒՏ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ**

*ՀՀ բնակչության կողմից տնօրինվող եկամուտների կարևոր բաղադրատարր են մասնավոր տրանսֆերտները և սեզոնային արտազնա աշխատողների եկամուտները, որոնց մասնաբաժինը ՀՆԱ-ում, տարածաշրջանի այլ երկրների համեմատ, շարունակում է բարձր մնալ: Արդյունքում՝ արտերկրից ստացվող վերոնշյալ ֆինանսական միջոցները զգալի կարևորություն ունեն տնային տնտեսությունների ֆինանսական կայունության տեսանկյունից:*

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ 2013 թ. առաջին կիսամյակում մասնավոր տրանսֆերտները և սեզոնային աշխատողների աշխատավարձերը բարձրացել են տ/տ 14.9%-ով և կազմել 713.1 մլն դոլար, ինչը, սակայն, շուրջ 4.2 %-ով զիջում է 2008 թ. առաջին կիսամյակի ցուցանիշը<sup>6</sup>: 2012 թ. համեմատությամբ փոքրինչ աճել է ոչ առևտրային բնույթի զուտ փոխանցումների մասնաբաժինը ՀՆԱ-ում: Դիտարկվող ժամանակահատվածում ավելացել է նաև բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից իրականացվող ոչ առևտրային փոխանցումների զուտ ներհոսքը, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 10.5%-ով: Ըստ ՀՀ ԿԲ գնա-

*Կիսամյակի ընթացքում ավելացել են ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումները, սակայն շարունակում են զիջել նախաձգնաժամային տարիների մակարդակը*

**Զուտ մասնավոր տրանսֆերտներ և սեզոնային աշխատողների վարձատրություն**



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


<sup>6</sup> ՀՀ վճարային հաշվեկշիռ՝ ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 5-րդ հրատարակության, <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>:

հատումների՝ 2013 թ. ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումները կավելանան 6-8%-ով:

Բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային դրամական փոխանցումների ներհոսքի գերակշիռ մասը՝ 83.5%-ը, շարունակում է ստացվել Ռուսաստանի Դաշնությունից (ԱՄՆ-ից՝ 5.3%-ը), ուր մեկնում է սեզոնային աշխատողների մեծ մասը: Ռուսաստան աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիները հիմնականում զբաղված են առևտրի և շինարարության ոլորտներում, որտեղ կիսամյակի ընթացքում արձանագրվել են աճի տեմպի դանդաղում՝ համապատասխանաբար մինչև 3.7% և 1.9% նվազում (մանրամասն տե՛ս «Տնտեսական զարգացումները Ռուսաստանի Դաշնությունում» ներգիր 1-ը): Բացի այդ, Ռուսաստանի միգրացիոն քաղաքականության հետ կապված հետագա անորոշությունները ևս կարող են իրենց ազդեցությունն ունենալ վերոնշյալ փոխանցումների ներհոսքի վրա:

**Ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների մեծ մասը ստացվում է Ռուսաստանի Դաշնությունից**

**Բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային զուտ փոխանցումներ**




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

**2.4. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԱՐՏՔԻ ԲԵՌ**

Դիտարկվող ժամանակահատվածում բնակչության եկամուտների վրա դրական ազդեցություն են ունեցել աշխատանքի շուկայի զարգացումները, որոնք, սակայն, ուղեկցվել են 2013 թ. երկրորդ եռամսյակում ձևավորված բարձր գնաճային միջավայրով և տնտեսական աճի տեմպերի դանդաղմամբ՝ հանգեցնելով իրական աշխատավարձերի նվազմանը: Մասնավորապես՝ անվանական աշխատավարձերի աճ գրանցվել է ինչպես մասնավոր (5.8%), այնպես էլ պետական (2.1%) հատվածներում և ընդհանուր վերցրած կազմել 3.5%: Սպառողական գների ինդեքսի 4.1% մակարդակի պարագայում արձանագրվել է իրական աշխատավարձերի 0.6% նվազում: Այնուամենայնիվ, արտերկրից ստացվող ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումներն ավելացել են, ինչը կարող է նպաստել տնային տնտեսությունների ֆինանսական կայունության ամրապնդման և այդ հատվածից բխող ռիսկերի նվազման վրա:

**Կիսամյակի ընթացքում ինչպես անվանական աշխատավարձերը, այնպես էլ բանկային համակարգում տնային տնտեսությունների խնայողություններն աճել են առավել դանդաղ տեմպերով**


**Միջին անվանական աշխատավարձ**



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

2013 թ. առաջին կիսամյակում, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, որոշակի նվազել է գործազրկության մակարդակը և կազմել 16.2%: Շարունակում է խնդրահարույց մնալ 1 տարուց ավելի աշխատանք փնտրող 35-45 տարեկան անձանց զբաղվածության հարցը, ինչը հետագայում կարող է սահմանափակել վերջիններիս՝ համապատասխան աշխատանք գտնելու հնարավորությունները: Ընդհանուր առմամբ, որոշ մարզերում և՛ զբաղվածությունը, և՛ անվանական աշխատավարձերը շարունակում են մնալ միջինից ցածր մակարդակի վրա, ինչն իր անդրադարձն է ունենում այդ մարզերում բնակչության կենսամակարդակի, հետևաբար նաև ֆինանսական ներգրավվածության մակարդակի վրա:


**Տնային տնտեսությունների պարտքի և եկամուտների ցուցանիշներ (%)**



Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ 2013 թ. անվանական աշխատավարձերը կբարձրանան 3.8%-ով՝ պայմանավորված ինչպես սպասվող գնաճային միջավայրով, այնպես էլ արտադրողականության և 2013 թ. երրորդ եռամսյակում նվազագույն աշխատավարձերի աճով: Տարվա ընթացքում կնվազի նաև գործազրկությունը, որը տարեվերջին կկազմի 15.2%:

Տնային տնտեսությունների անվանական եկամուտների աճին զուգընթաց աճել են նաև բանկային ավանդները, սակայն առա-


**Տնային տնտեսությունների պարտավորությունների կառուցվածքը**  
մլն ՀՀ դրամ




**ՀՀ տնային տնտեսությունների պարտքի բեռի չափավոր աճ է արձանագրվել**

**Հատկապես մեծ են եղել տնային տնտեսությունների սպառողական վարկավորման ծավալները**

**Բանկերի և վարկային կազմակերպությունների հիփոթեքային և սպառողական վարկային պորտֆելը**



**ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների սպառողական վարկային պորտֆելի կառուցվածքը**



1. Քարտային վարկեր, 2. Ոսկու գրավով վարկեր, 3. Ավտոմեքեր, 4. Կենցաղային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման վարկեր, 5. Այլ սպառողական վարկեր

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

վել դանդաղ տեմպերով (10.5%): Արդյունքում՝ բնակչության ավանդների մասնաբաժինը ընդհանուր ավանդներում նվազել է 3.0 տոկոսային կետով և կազմել 49.7%: Բանկային ավանդներում շարունակում են մեծ կշիռ պահպանել արտարժութային ավանդները (68.4 %), ինչն առևտրային բանկերի տեսանկյունից կարող է սահմանափակել դրամային ակտիվներում ֆինանսական միջոցների տեղաբաշխման հնարավորությունները: Ավանդների հետագա աճին որոշակիորեն կարող են նպաստել նաև հասարակության ֆինանսական կրթվածության բարձրացմանը նպատակաուղղված միջոցառումների արդյունքում ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության բարձրացումն ու բնակչության եկամուտների աճը:

ՀՆԱ-ի համեմատ տնային տնտեսությունների պարտքի առավել մեծ աճի հետևանքով չափավոր աճել է պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը և կազմել է 17.8%, որը, սակայն, զիջում է Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների ցուցանիշներին: Այստեղից կարելի է ենթադրել, որ պարտքի բեռի հետագա չափավոր աճը ֆինանսական կայունության վրա ազդող էական ռիսկեր չի կարող առաջացնել: Տնային տնտեսությունների պարտքի բեռի գերակշիռ մասը ֆինանսական հաստատությունների և, մասնավորապես, բանկերի նկատմամբ պարտավորություններն են: 2013 թ. առաջին կիսամյակում ֆինանսական հաստատությունների հանդեպ տնային տնտեսությունների պարտավորություններն ավելացել են 15.0%-ով:

Դիտարկվող ժամանակահատվածում առավել դանդաղ տեմպերով են աճել ինչպես հիփոթեքային, այնպես էլ սպառողական վարկավորման ծավալները՝ համապատասխանաբար 3.2%-ով և 10.4%-ով: Աճել են սպառողական վարկավորման բոլոր վարկատեսակները, սակայն առաջանցիկ աճի շնորհիվ սպառողական վարկավորման մեջ ավելացել է քարտային սպառողական վարկավորման մասնաբաժինը:

ՀՀ ԿԲ հարցման արդյունքները<sup>7</sup> ցույց են տվել, որ ֆինանսական հաստատությունների համար սպառողական վարկավորումը շարունակում է մնալ վարկավորման ցանկալի ուղղություններից մեկը, որի շնորհիվ այս վարկատեսակների գծով մրցակցությունը խիստ բարձր է: Արդյունքում շարունակվել են վարկավորման ընթացակարգերի կատարելագործումը, առաջարկվող պայմանների բարելավումները, ինչպես նաև տրամադրվող վարկերի ժամկետայնությունների աճը:

Հիփոթեքային վարկավորման աճին նպաստել է անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեքային վարկավորումը, որի ավելի քան 50%-ը կազմում են արտարժութային վարկերը, ինչը կարող է դրամային եկամուտներ ստացող վարկառուների շրջանում մեծացնել արտարժութային ռիսկով պայմանավորված վարկային ռիսկերը: ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացմանը որոշակիորեն նպաստում է նաև Բնակարան՝ երիտասարդներին և Ազգային հիփոթեքային ընկերությունների գործունեությունը, որոնց նպատակն է հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման միջոցով առավել հասանելի դարձնել բնակարանային վարկերը: 2013 թ. առաջին կիսամյակում վերոնշյալ ընկերությունների կողմից վերաֆինանսավորված վարկերը կազմել են ընդհանուր հիփոթեքային պորտֆելի շուրջ 27%-ը: ՀՀ հիփոթեքային շուկայի ընդ-

<sup>7</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ կողմից 2013 թ. առաջին կիսամյակում անցկացված «ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի պայմանների վերաբերյալ» եռամսյակային հարցման ամփոփումներ:

լայնման հնարավորությունների մասին են վկայում բանկերի և վարկային կազմակերպությունների՝ հիփոթեքային պորտֆելի աճի ուղղությամբ սպասումները<sup>8</sup>: Տոկոսադրույքի առումով ինչպես սպառողական, այնպես էլ հիփոթեքային վարկավորման փոփոխությունները եղել են նվազման ուղղությամբ՝ մինչև 0.5 տոկոսային կետ:

Վարկավորող հաստատությունների կողմից տնային տնտեսություններին տրամադրված սպառողական և հիփոթեքային վարկերում «չաշխատող» վարկերի կշիռները որոշակի աճել են: Շարունակում է համեմատաբար բարձր մնալ արտարժույթային հիփոթեքային վարկերի «չաշխատող» վարկերի տեսակարար կշիռը, ինչը վկայում է արտարժույթային ռիսկերից ածանցվող վարկային ռիսկերի առկայության մասին: Բանկերում «չաշխատող» սպառողական վարկերն առավելապես աճել են վարկային արտարժույթային քարտերի մասով: Ընդհանուր առմամբ, տնային տնտեսություններին տրամադրված վարկային պորտֆելի վարկային ռիսկը կառավարելի շրջանակներում է, որի համար կարևոր նշանակություն ունի բանկերի կողմից վարկառուների վարկունակության գնահատման բավականաչափ խիստ մոտեցումների կիրառումը:

Բնակչության տնտեսական վիճակի և եկամուտների սպասումների անուղղակի գնահատական կարելի է ստանալ նաև սպառողների վստահության ինդեքսի բաղադրատարրերից՝ ընթացիկ և ապագա պայմանների ենթահինդեքսներից<sup>9</sup>, որոնք նվազել են ինչպես 2013 թ. առաջին, այնպես էլ նախորդ տարվա երկրորդ եռամսյակների նկատմամբ: 2013 թ. երկրորդ եռամսյակում աճ ունեցել են միայն ընթացիկ եռամսյակում խոշոր գնումներ կատարելու և գալիք եռամսյակում խոշոր գնումներ կատարելու ակնկալիքի ենթահինդեքսները:

## 2.5. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԵՐ

*Ֆինանսական կայունության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն անշարժ գույքի շուկայի զարգացումները, որոնք ուղղակի կամ անուղղակի կարող են ազդել ֆինանսական համակարգի բնականոն գործունեության վրա: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ անշարժ գույքը մի կողմից հանդես է գալիս որպես ֆինանսական ներդրումների այլընտրանք, իսկ մյուս կողմից՝ վարկավորման մեծ մասն իրականացվում է անշարժ գույքի գրավադրմամբ:*

2013 թ. առաջին կիսամյակում Երևանում արձանագրվել է բնակելի շենքերի բնակարանների<sup>10</sup> գների աճ ինչպես նախորդ տարվա առաջին, այնպես էլ երկրորդ կիսամյակների համեմատ՝ համապատասխանաբար 6.8%-ով և 3.0%-ով: Գների աճ դիտարկվել է Երևանի բոլոր համայնքներում, ընդ որում՝ բարձր աճ արձանագրվել է հատկապես Ավան, Նոր Նորք, Աջափնյակ և Նուբա-

<sup>8</sup> Աղբյուրը՝ ԳԳ 4Բ կողմից 2013 թ. առաջին կիսամյակում անցկացված «ԳԳ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի պայմանների վերաբերյալ» եռամսյակային հարցման ամփոփումներ:


<sup>9</sup> Աղբյուրը՝ ԳԳ 4Բ կողմից 2013 թ. երկրորդ եռամսյակում անցկացված «Տնային տնտեսությունների հարցման ամփոփում»

<https://www.cba.am/am/sitepages/statsseabci.aspx>:

<sup>10</sup> ԳԳ-ում անշարժ գույքի միասնական միջին գների ինդեքսի բացակայության պատճառով որպես անշարժ գույքի գնային զարգացումների չափորոշիչ է ընտրվել Երևանի բնակարանների միջին գների ինդեքսը:

**Տնային տնտեսությունների վարկային պորտֆելի որակից բխող ռիսկերը շարունակում են մնալ կառավարելի մակարդակում**

Ապագա պայմանների ինդեքսը և դրա բաղադրատարրերը



Աղբյուրը՝ ԳԳ 4Բ:

**2013 թ. երկրորդ եռամսյակում լավատեսական են միայն բնակչության ընթացիկ եռամսյակի համեմատ գալիք եռամսյակում խոշոր գնումներ կատարելու սպասումները**

**2013 թ. առաջին կիսամյակում բնակարանների գների բարձրացումը դրական է անդրադարձել անշարժ գույքի գների հնարավոր բացասական տատանումներից բխող ռիսկերի զսպման վրա**


Բնակարանների միջին գների ինդեքսը Երևանում (1 քառ. մ)



Աղբյուրը՝ ԳԳ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:




**Բնակարանների գները երևանում ըստ համայնքների**



Աղբյուրը՝ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:


**Ըստ առուվաճառքի գործարքների քանակի՝ անշարժ գույքի շուկայի ակտիվությունը նվազել է ինչպես երևանում, այնպես էլ մարզերի քաղաքների մեծ մասում**

**Անշարժ գույքի առուվաճառքի ինդեքսը**



Աղբյուրը՝ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

**Բնակարանների առուվաճառքի և անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեքային վարկերի քանակի բաշխվածությունը**



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ԱՀԸ:

րաշեն համայնքներում, որտեղ բնակարանների գները համեմատաբար ցածր են: Բնակարանների գները բարձրացել են նաև ՀՀ մարզերի քաղաքներում՝ տ/տ 5.3% (2012 թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել են 2.6%-ով): Անշարժ գույքի գները շարունակում են անհամեմատ բարձր մնալ Ծաղկաձորում, Վաղարշապատում և Աբովյանում: Դիտարկվող ժամանակահատվածում առևտրային բանկերը շարունակել են անշարժ գույքով ապահովված վարկեր տրամադրել անշարժ գույքի շուկայական արժեքի 60 - 80%-ի միջակայքում, որի արդյունքում անշարժ գույքի գների տատանումներով պայմանավորված ռիսկերը ֆինանսական կայունության տեսանկյունից նշանակալի չեն եղել (մանրամասն տես՝ «Առևտրային բանկերի շուկայական ռիսկ» ենթաբաժինը):

Չնայած վերոնշյալ զարգացումներին՝ գները շարունակում են անհամեմատ ցածր մնալ 2008 թ. առաջին կիսամյակի ցուցանիշներից: Մասնավորապես՝ Երևանի բոլոր համայնքներում 1 քմ մակերեսի հաշվարկով շուկայական միջինացված գները զիջում են 2008 թ. առաջին կիսամյակում ձևավորված գներին, ընդ որում՝ դա զգալի է հատկապես Արաբկիր, Կենտրոն, Աջափնյակ համայնքներում:

Գների աճն ուղեկցվել է բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի նվազմամբ՝ 2013 թ. առաջին կիսամյակում, 2012 թ. առաջին և երկրորդ կիսամյակների համեմատ՝ համապատասխանաբար 8.9%-ով և 5.1%-ով: Նշվածը հիմնականում պայմանավորված է հունվարին և մայիսին կատարված գործարքների քանակի նվազմամբ: Մարզերում ինչպես բնակարանների, այնպես էլ առանձնատների առուվաճառքի գործարքների քանակը ընդհանուր առմամբ նվազել է: Համաձայն ՀՀ ԿԲ հարցման<sup>11</sup> արդյունքների՝ առուվաճառքը համեմատաբար ակտիվ է եղել անշարժ գույքի երկրորդային շուկայում, որտեղ էլ ակնկալվում է հետագա աշխուժացում: Անշարժ գույքի առուվաճառքի գործարքների նվազումը իր բացասական ազդեցությունն է ունեցել գրավի իրացվելիության վրա, որի գծով ռիսկերը դրսևորվել են հարցումներին մասնակից որոշ ընկերություններում: Անշարժ գույքի շուկայի ակտիվության անուղղակի բնութագրիչներից է նաև հանրապետությունում իրականացված գրավադրումների քանակը, որը դիտարկվող ժամանակահատվածում, 2012 թ. երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 16.6%-ով (2012 թ. առաջին կիսամյակի համեմատ ավելացել է 49.9%-ով): Ինչպես առուվաճառքի, այնպես էլ հիփոթեքային գրավադրման գործարքների և անշարժ գույքի ձեռքբերման նպատակով տրված հիփոթեքային վարկերի քանակը հիմնականում ունեցել է գրեթե համանման մարզային բաշխվածություն և շարունակում է կենտրոնացած մնալ Երևանում:

Անշարժ գույքի շուկայի հետագա զարգացումը սահմանափակում է վճարունակ պահանջարկի ցածր մակարդակը: Այդ տեսանկյունից՝ որոշակի ակտիվություն հաղորդում է հիփոթեքային վարկավորումը: Ըստ ՀՀ ԿԲ հարցումների<sup>12</sup> առևտրային և վարկային կազմակերպությունները ակնկալում են հիփոթեքային վարկավորման շարունակական աճ՝ պայմանավորված դրա նկատմամբ պահանջարկի աճով: Ֆինանսական կայունության տեսանկյունից՝ վերոնշյալ աճը չի կարող առաջացնել էական ռիսկեր, քանի որ ՀՀ ֆինանսական համակարգում հիփոթեքային վարկավորման մասնաբաժինը, այլ երկրների համեմատ, ընդհանուր վարկային պորտֆելում բավականաչափ ցածր է:

<sup>11</sup>, <sup>12</sup> ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի պայմանների վերաբերյալ 2013 թ. առաջին եռամսյակում անցկացված ՀՀ ԿԲ հարցում:

Բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի նվազմանը զուգընթաց զգալիորեն նվազել է նաև անշարժ գույքի առաջարկը, ինչը որոշակիորեն կարող է նպաստել զգների հետագա աճին: 2013 թ. առաջին կիսամյակում տ/տ 42.6%-ով նվազել են բնակելի շենքերի գործարկման ծավալները՝ պայմանավորված կազմակերպությունների և պետական բյուջեի հաշվին գործարկված ծավալների կրճատմամբ: Կազմակերպությունների միջոցներով բնակելի շենքերի գործարկումը հիմնականում կենտրոնացված է Երևանում, որի հետևանքով վերոնշյալ ցուցանիշի նվազումը զգալի է եղել Երևանում: Բնակչության միջոցների հաշվին բնակելի շենքերի գործարկման ծավալները շարունակաբար աճել են, ինչի արդյունքում աճել է նաև դրանց մասնաբաժինը գործարկման ընդհանուր ծավալներում:

Թեև գործարկված բնակելի շենքերի ծավալները նվազել են, սակայն կիսամյակի ընթացքում տ/տ 5.1%-ով ավելացել են անշարժ գույքի հետ կապված շինարարության ծավալները, ինչը կարող է վկայել հետագայում անշարժ գույքի առաջարկի ավելացման մասին: Այնուհանդերձ, վարկավորող հաստատությունների կողմից բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարությանն ուղղված վարկավորումը, ինչը կարևորվում է անշարժ գույքի առաջարկի տեսանկյունից, կիսամյակի ընթացքում նվազել է 3.2%-ով և կազմել 84.6 մլրդ դրամ: Դրա հետ մեկտեղ, էապես աճել է «չաշխատող» վարկերի տեսակարար կշիռը, ինչը կարող է հետագայում իր ազդեցությունն ունենալ կազմակերպությունների միջոցով իրականացվող շինարարության ծավալների վրա:


**Բնակելի շենքերի գործարկումն ըստ ֆինանսավորման աղբյուրների**

Ֆինանսավորման աղբյուրներ	2013 թ. I կիս. գործարկված բնակելի շենքեր (թառ. մ)	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ	Տոկոսային փոփոխությունը 2012 թ. I կիս. համեմատությամբ
<b>Ընդամենը, այդ թվում</b>	66946	100%	-42.6%
պետական բյուջե	-	-	-
կազմակերպությունների միջոցներ	14632	21.9%	-67.2%
բնակչության միջոցներ	52314	78.1%	3.1%

Աղբյուրը՝ ԳԳ ԱԿԾ:


**Թեև անշարժ գույքի առաջարկը նվազել է, սակայն անշարժ գույքի հետ կապված շինարարության ծավալներն ավելացել են**

**Հիփոթեքային վարկերի մասնաբաժինը վարկային պորտֆելում՝ ըստ երկրների**



Աղբյուրը՝ ԱՄԳ:

**Անշարժ գույքի շուկայի վարկավորման ծավալը**



Աղբյուրը՝ ԳԳ ԱԿԾ:

**ԱՍՓՈՓՈՒՄ**

2013 թ. առաջին կիսամյակում շարունակվել է տնտեսական ակտիվությունը, սակայն առավել դանդաղ տեմպերով՝ հիմնականում պայմանավորված շինարարության ճյուղի անկմամբ և արդյունաբերության ճյուղի դանդաղ աճի տեմպերով: Գյուղատնտեսության աճի տեմպի նվազումը և ծառայությունների զգների աճը ձևավորել են բարձր գնաճային միջավայր, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ տնային տնտեսությունների և ձեռ-

Մարկությունների վարկունակության, ինչպես նաև ֆինանսական ծառայություններից օգտվելու հնարավորությունների վրա: Այնուամենայնիվ, ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների բարձր աճը, անշարժ գույքի գների չափավոր աճը և աշխատանքի շուկայի բարելավումները որոշակիորեն չեզոքացրել են բնակչության կենսամակարդակի վրա վերոնշյալ զարգացումների բացասական ազդեցությունները: Արտաքին և ներքին զարգացումների ներքո 2013 թ. առաջին կիսամյակում առկա են տնտեսական աճի դանդաղման ուղղությամբ ռիսկեր, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ֆինանսական կայունության վրա:



### 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

#### 3.1. ԴՐԱՄԱԿԱՆ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՆԵՐ


2013 թվականի առաջին կեսին ՀՀ ԿԲ-ն շարունակել է դրամավարկային քաղաքականության գործիքի տոկոսադրույքը պահպանել անփոփոխ մակարդակում, որի պարագայում չնայած երկրորդ եռամսյակում առկա էր գնաճի արագացում կարճաժամկետ հատվածում, սակայն բնականոն գնաճի՝ 12-ամսյա գնաճի տատանումների թույլատրելի միջակայքում լինելու և գնաճային սպասումների՝ խարսխված գնահատելու պայմաններում գնաճը միջնաժամկետ հատվածում վերադառնալու էր նպատակային արժեքին:

Վերոնշյալ պայմաններում 2013 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են ԿԲ-ի հետ ռեպո գործառնությունների ծավալները: ԿԲ հիմնական գործիքի տոկոսադրույքի կայուն մակարդակի պահպանման պայմաններում կարճաժամկետ շուկայական տոկոսադրույքները կիսամյակի ընթացքում դրսևորել են թույլ նվազող վարքագիծ: Արդյունքում՝ միջբանկային ռեպո և բորսայական վարկերի տոկոսադրույքները մոտեցել են ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքին:

Առևտրային բանկերի կողմից արտադրողական ճյուղերի՝ ՀՀ դրամով վարկավորումը և պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը խթանելու նպատակով 2013 թ. հունիսին ԿԲ խորհուրդն իջեցրել է ՀՀ բանկերի դրամային պարտավորությունների դիմաց պարտադիր պահուստավորման նորման՝ սահմանելով 4%: Դրվարային պարտավորությունների դիմաց պահուստավորման նորման սահմանվել է 12%, ինչը դրվարայնացման մակարդակը նվազեցնելու նպատակ է հետապնդում:

Եկամտաբերության կորերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, տարեվերջի համեմատ, գրեթե բոլոր ժամկետայնությամբ պարտատոմսերի՝ մինչև մարում եկամտաբերությունը նվազել է: Բացառություն են կազմում 1-2 տարի ժամկետայնությամբ պարտատոմսերը, որոնց մինչև մարում եկամտաբերությունն աճել է ավելի քան 2 տոկոսային կետով: Եկամտաբերության կորի թեքությունը կազմել է 0.33՝ տարեվերջի 0.29-ի փոխարեն, ինչը փաստում է կարճաժամկետ և երկարաժամկետ տոկոսադրույքների միջև տարբերության մեծացման մասին:


**Վարկային ռեսուրսների հարթակում իրականացված գործարքների ծավալը և միջին կշռված տոկոսադրույքը**



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

**ԿԲ հիմնական գործիքի տոկոսադրույքի կայուն մակարդակի պահպանման պայմաններում կարճաժամկետ շուկայական տոկոսադրույքները դրսևորել են թույլ նվազող վարքագիծ**

**Ռեպո գործառնությունների ամսական ծավալները և տոկոսադրույքների մակարդակները**




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

**Միջբանկային ռեպո և բորսայական վարկերի տոկոսադրույքները մոտեցել են վերաֆինանսավորման տոկոսադրույքին**

**Եկամտաբերության կորերը ցույց են տալիս, որ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են գրեթե բոլոր հատվածներում՝ բացառությամբ 1-2 տարի ժամկետայնության**


**ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերը**



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

2013 թվականի առաջին կիսամյակի վերջի դրությամբ շրջանառությունում առկա պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը՝ դյուրացիան, կազմել է 998 օր, իսկ տոկոսադրույքի ռիսկի գնահատման նպատակով հաշվարկվող մոդիֆիկացված դյուրացիայի միջին ցուցանիշը (D<sub>M</sub>) շրջանառությունում առկա պետական պարտատոմսերի համար կազմել է 2.42:

Պետական զանգվածային կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման ծավալները և միջին կշռված եկամտաբերությունները



Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

**30.06.2013 թ. դրությամբ շրջանառությունում գտնվող պետական պարտատոմսերի մոդիֆիկացված դյուրացիայի ցուցանիշը տարբեր ժամկետային խմբերի համար**

D <sub>M</sub>	մինչև 6 ամիս	6 ամիսից 1 տարի	1-2 տարի	2-5 տարի	5-7 տարի	7-10 տարի
	0.25	0.70	1.29	2.60	-	5.19


Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

**30.06.2013 թ. դրությամբ առևտրային բանկերի՝ առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի պետական պարտատոմսերի պորտֆելի մոդիֆիկացված դյուրացիայի ցուցանիշը և եկամտաբերության 1% փոփոխության դեպքում հավանական շահույթ/վնասի մեծությունը տարբեր ժամկետային խմբերի համար**

Ցուցանիշ	Մինչև 6 ամիս	6 ամիսից 1 տարի	1-2 տարի	2-5 տարի	5-7 տարի	Ընդամենը
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի նպատակով ձեռք բերված ՊԿՊ ծավալ (մլն դրամ)	14301.13	21956.06	21508.71	47784.16	15909.62	121459.68
Տեսակարար կշիռը ընդհանուր պորտֆելում	11.77%	18.08%	17.71%	39.34%	13.10%	100%
D <sub>M</sub>	0.24	0.75	1.49	2.60	5.37	2.08
Գնի փոփոխություն +/- (մլն ՀՀ դրամ)	35.00	162.11	319.23	1282.96	953.51	2752.82

Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

ՊՊ առուվաճառքի գործառնությունների և ՊՊ գործառնությունների ծավալ/շրջանառությունում առկա ՊՊ ծավալ հարաբերակցությունը



Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

Առևտրային նպատակով ձեռք բերված պետական պարտատոմսերի եկամտաբերության 1% աճի պարագայում առևտրային բանկերի պետական արժեթղթերի պորտֆելի հավանական վնասները կարող են կազմել մոտ 2.8 մլրդ դրամ, ընդ որում՝ զերակշիռ մասը սպասվում է միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերից՝ պայմանավորված նշված պարտատոմսերի՝ տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ ավելի բարձր զգայունությամբ:

2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների եկամտաբերությունների միջին քառակուսային շեղումը նախորդ կիսամյակի համեմատ աճել է 0.08 կետով և կազմել է 2.35: Շուկայական ռեպո տոկոսադրույքների միջին քառակուսային շեղումը նվազել է 0.08 տոկոսային կետով և կազմել 0.52:

2013 թվականի առաջին կիսամյակում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց<sup>13</sup> կողմից արժեթղթերի շուկայում

**Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից երկրորդային շուկայում իրականացված արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնությունները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են**

<sup>13</sup> 30.06.2013 թ. դրությամբ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց 21 առևտրային բանկերը, 9 ներդրումային ընկերությունները և 1 ներդրումային ֆոնդի կառավարիչն են:

իրականացված համախառն գործառնությունները (ներառյալ՝ ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունները՝ առանց ՀՀ ԿԲ հետ գործարքների) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 17.3%-ով և կազմել 1 տրլն 499 մլրդ դրամ: Արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները կազմել են վերոնշյալ շրջանառության 26.0%-ը:

2013 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիության<sup>14</sup> մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եղել է ավելի տատանողական, որը հիմնականում պայմանավորված է ապրիլին պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների կտրուկ աճով: Այսպես, պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիության ցուցանիշի ստանդարտ շեղումը կազմել է 3.57՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2.12-ի փոխարեն:

Պետական արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների մեջ երկարաժամկետ և միջնաժամկետ պետական պարտատոմսերով իրականացված առուվաճառքի գործառնությունների տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 52.4% և 36.3%, իսկ կարճաժամկետ պարտատոմսերինը՝ 11.3%:


Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց իրականացրած ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունները (առանց ՀՀ ԿԲ հետ գործառնությունների) առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 28.6%-ով և կազմել 1 տրլն 109 մլրդ դրամ, ընդ որում՝ գրեթե բոլոր ռեպո գործառնությունները իրականացվել են պետական արժեթղթերով: Կորպորատիվ պարտատոմսերով կնքված ռեպո գործարքները կազմել են ընդամենը 0.6%:

2013 թվականի առաջին կիսամյակում կարգավորվող շուկայում արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնությունների ընդհանուր շրջանառությունը կազմել է 5.9 մլրդ դրամ, որից 93.6%-ը առուվաճառքի գործառնություններն են:


Կարգավորվող շուկայում իրականացված առուվաճառքի և ռեպո գործառնություններում գերակշռել են կորպորատիվ պարտատոմսերով գործառնությունները՝ կազմելով բորսայական շրջանառության 39.9%-ը: Պետական պարտատոմսերով և բաժնային արժեթղթերով իրականացված առուվաճառքի գործառնությունները համապատասխանաբար կազմել են 35.6% և 24.4%:

Տարեսկզբից ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների կառուցվածքում կարգավորվող շուկայի մասնաբաժինը 0.8% է: 30.06.2013 թ. դրությամբ կարգավորվող շուկայում առուվաճառքի թույլատրված բաժնետոմսերի 11 հաշվետու թողարկողներից առաջատարների կենտրոնացվածությունն ըստ կապիտալացման առաջին կիսամյակում ունեցել է աճի միտում:

**Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները**




**Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված ռեպո գործառնությունները**




**Կարգավորվող շուկայում իրականացված գործառնություններում գերակշռել են կորպորատիվ պարտատոմսերով իրականացված գործառնությունները**

**Արժեթղթերի կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնությունները**




<sup>14</sup> Պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիությունը հաշվարկվում է որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում ամսվա ընթացքում իրականացված առուվաճառքի գործառնությունների և շրջանառությունում առկա պետական պարտատոմսերի ծավալների հարաբերակցություն:

**ՀՀ արժուրային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները և փոխարժեքները**




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

**ՀՀ արժուրային շուկայում իրականացված գործառնություններն ըստ արժույթների**



**Փոխարժեքները ՀՀ արժուրային շուկայում**



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

**Քաժնետոմսեր թողարկողների առաջատար եռյակի և հնգյակի կենտրոնացվածությունն ըստ կապիտալացման մակարդակի (2010-2013 թթ. առաջին կիսամյակներում, %)**

Ժամկետ	Առաջատար երեք ընկերությունների կապիտալացում	Առաջատար հինգ ընկերությունների կապիտալացում
31.12.2010	80.1	94.7
31.12.2011	83.8	96.6
31.12.2012	78.8	96.2
30.06.2013	80.1	96.8

**3.2. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ**

ՀՀ ներքին արժուրային շուկայում 2013 թվականի առաջին կիսամյակում հիմնականում դրսևորվել է ՀՀ դրամի արժեզրկում: ՀՀ դրամի միջին շուկայական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 412.2 դրամ՝ նախորդ կիսամյակի համեմատությամբ արժեզրկվելով 0.9%-ով: Եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի միջին շուկայական փոխարժեքը արժեզրկվել է համապատասխանաբար 3.9%-ով և 2.4%-ով՝ կազմելով 541.4 և 13.3:

2013 թվականի առաջին կիսամյակում ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքը, նախորդ տարվա համեմատությամբ, արժեզրկվել է 3.3%-ով, իսկ իրական արդյունավետ փոխարժեքը՝ 3.7%-ով:<sup>15</sup>

Տարվա առաջին կիսամյակում բանկային համակարգի արտարժույթի առուվաճառքից օգուտը կազմել է 6.8 մլրդ:

**ԱՍՓՈՓՈՒՄ**

2013 թվականի առաջին կիսամյակում ձևավորված չափավոր գնաճային միջավայրը հնարավորություն տվեց քաղաքականության տոկոսադրույքը պահպանել 8% մակարդակում:

Նկարագրված միջավայրում կարճաժամկետ շուկայական տոկոսադրույքները կիսամյակի ընթացքում դրսևորել են թույլ նվազող վարքագիծ, և միջբանկային ռեպո ու բորսայական վարկերի տոկոսադրույքները մոտեցել են ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքին:

Արժեթղթերի երկրորդային շուկայում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացվող արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնությունների ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են:

<sup>15</sup> ՀՀ դրամի փոխարժեքի վարքագիծը, ինչպես նաև ՀՀ արտաքին մրցունակությունը ուսումնասիրելու նպատակով դիտարկվում են նաև անվանական և իրական արդյունավետ փոխարժեքները, որոնք հաշվարկվում են արտաքին ապրանքաշրջանառության մեջ տասներկու հիմնական գործընկեր երկրներին (Եվրոգոտի, Ռուսաստան, Ուկրաինա, Հարավային Կորեա, Բուլղարիա, Շվեյցարիա, Իրան, ԱՄՆ, Թուրքիա, Վրաստան, Ճապոնիա, Չինաստան) բաժին ընկնող համապատասխան կշիռների հիման վրա:

Ներքին արժութային շուկայում զարգացումները հիմնականում եղել են արժեզրկման ուղղությամբ, ինչի արդյունքում միջին կիսամյակային շուկայական փոխարժեքը նախորդ կիսամյակի համեմատությամբ արժեզրկվել է 0.9%-ով և կազմել է 412.18:

Այսպիսով, 2013 թվականի առաջին կիսամյակում ֆինանսական շուկաների զարգացումները էական ազդեցություն չեն ունեցել ֆինանսական կայունության վրա:

#### 4. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ


2013 թ. շարունակվել են ֆինանսական միջնորդության ընդլայնման միտումները

2013 թ. առաջին կիսամյակում, 2012 թ. համեմատ, բանկերը համեմատաբար ցածր ակտիվություն են ցուցաբերել վարկային շուկայում

Ֆինանսական համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշն ավելացել է 3.8 տոկոսային կետով և կազմել 72.5%: Հայաստանի բանկային համակարգին<sup>16</sup> բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 89.3%-ը, ուստի Հայաստանի ֆինանսական կայունության գնահատման համատեքստում առավելապես կարևորվում են բանկային համակարգի գործունեության ռիսկայնության բացահայտումն ու գնահատումը: Ապահովագրական, արժեթղթերի շուկաների մասնակիցների, ինչպես նաև ֆինանսական համակարգի մյուս հաստատությունների մասնաբաժինը, բանկային համակարգի համեմատ, շարունակում է մնալ բավականին փոքր, և Հայաստանի ֆինանսական համակարգի կայունության վրա վերջիններիս գործունեության ազդեցությունը մեծ չէ:

Բանկերի կողմից տնտեսության վարկավորման աճի տեմպերի թուլացումը հիմնականում պայմանավորված է վարկային շուկայի հագեցվածությամբ և նոր վարկային ծառայությունների առաջարկի անհրաժեշտությամբ:

Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքն ըստ ֆինանսական հաստատությունների




1. Բանկեր, 2. Վարկային կազմակերպություններ, 3. Ապահովագրական ընկերություններ, 4. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, 5. Այլ ֆինանսական կազմակերպություններ

Աղբյուրը՝ ՀՀ ԿՔ:

#### 4.1. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐ

Բանկային համակարգի կայունության քարտեզ



#### Բանկային համակարգի կայունության քարտեզը

Բանկային համակարգի կայունության վարքագծի վերաբերյալ ընդհանրական պատկերացում է տալիս բանկային կայունության քարտեզը<sup>17</sup>, որն արտացոլում է բանկերին բնորոշ ռիսկերը բնութագրող ցուցանիշների փոփոխությունը երկու տարբեր ժամանակաշրջաններում:

<sup>16</sup> ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերը:

<sup>17</sup> Բանկային համակարգի կայունության քարտեզում օգտագործվել են կապիտալի համարժեքությունը, ակտիվների որակը, իրացվելիությունը, եկամտաբերությունը, տոկոսադրույքի ռիսկը և արտարժույթային ռիսկը բնութագրող ցուցանիշներ: Ցուցանիշները քարտեզում օգտագործելուց առաջ նորմավորվել են 1-10 չափողականությամբ, հաշվարկվել են ԱՄՆ մեթոդաբանությանը համապատասխան: Արժեքների մոտեցումը քարտեզի կենտրոնին վկայում է ռիսկի նվազեցման, իսկ կենտրոնից հեռացումը՝ ռիսկի աճի մասին: Բանկային համակարգի կայունության քարտեզը չի կարող մեկնաբանվել որպես ֆինանսական կայունության մակարդակի արտացոլում, այն ընդամենը պատկերացում է տալիս ներառված ռիսկերի մակարդակի փոփոխության վերաբերյալ՝ աճել է, թե՞ նվազել:

Բանկային կայունության քարտեզի բաղադրիչները 2013 թ. երկրորդ եռամսյակում, 2012 թ. երկրորդ եռամսյակի համեմատ, ենթարկվել են որոշակի փոփոխությունների: Դրական տեղաշարժ է գրանցվել արտարժույթային ռիսկի և իրացվելիության ցուցանիշների վարքագծում: Որոշակի նվազել են կապիտալի համարժեքության ցուցանիշի, ակտիվների որակի և եկամտաբերության ցուցանիշների արժեքները (մանրամասն տե՛ս «Վարկային ռիսկ», «Իրացվելիության ռիսկ», «Շուկայական ռիսկ», «Կապիտալի համարժեքություն և եկամտաբերություն» ենթաբաժիններում):

**4.1.1. Ֆինանսական միջնորդություն, կենտրոնացվածություն**

2013 թ. առաջին կիսամյակում, անվանական ՀՆԱ աճին զուգընթաց, տնտեսությունում արձանագրվել է բանկային համակարգի ակտիվների առաջանցիկ աճ, ինչի արդյունքում բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ հարաբերակցությունը աճել է 1.9 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով 64.1%: Տնտեսությանը տրամադրված վարկերի և ՀՆԱ հարաբերակցությունը տարեվերջի համեմատ ավելացել է 0.9 տոկոսային կետով և կազմել 39.5%:

Բանկային համակարգի կողմից ներգրավված ավանդների և ՀՆԱ հարաբերակցությունն աճել է 4.4 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով 32.8%: Կիսամյակի ընթացքում 0.8 տոկոսային կետով նվազել է փողի զանգվածի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշը և կազմել 33.0%:

Բանկային համակարգի կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների մասնակցության տեսակարար կշիռը տարեկան համեմատ նվազել է 0.1 տոկոսային կետով և կիսամյակի վերջին կազմել 73.2%:

Առաջին կիսամյակում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 3.1%-ով (12.5 մլրդ դրամով), իսկ ընդհանուր ակտիվները՝ 6.6%-ով (162.9 մլրդ դրամով): Արդյունքում ընդհանուր կապիտալ/ընդհանուր ակտիվներ հարաբերակցության ցուցանիշը (լեզրիջի ցուցանիշ) նվազել է 0.5 տոկոսային կետով և կազմել 15.6%:

**Կենտրոնացվածության Չերֆինդալ-Չիրշմանի գործակից**


Ցուցանիշներ	31.12.10	31.12.11	31.12.12	30.06.13
Ընդհանուր ակտիվներ	0.0670	0.0775	0.0787	0.0726
Ընդհանուր պարտավորություններ	0.0787	0.0792	0.0705	0.0757
Ընդհանուր կապիտալ	0.0646	0.0644	0.0637	0.0624

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


Ըստ Չերֆինդալ-Չիրշմանի տարբեր ամփոփ բնութագրիչների (ակտիվներ, պարտավորություններ, կապիտալ, վարկեր, ավանդներ) գործակիցների<sup>18</sup> համակարգի կենտրոնացվածությունը

<sup>18</sup> Չերֆինդալ-Չիրշմանի գործակիցն ընդունում է արժեքներ 0-1 միջակայքում և բնութագրում կենտրոնացվածությունը (0-ին մոտ արժեքները բնութագրում են կենտրոնացվածության ցածր աստիճան):


**Ֆինանսական միջնորդության մակարդակը**




**Ֆինանսական միջնորդության մակարդակը 2012 թվականին, ըստ տարբեր երկրների**



**Օտարերկրյա ներդրողների մասնակցությունը ՀՀ բանկային համակարգի կապիտալում**



**4 խոշորագույն բանկերի ակտիվների, պարտավորությունների և կապիտալի տեսակարար կշիռները ՀՀ բանկային համակարգում**




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:



պահպանվել է ցածր մակարդակում, ինչը սահմանափակում է ֆինանսական կայունության վրա կենտրոնացվածության ռիսկի ազդեցության հավանականությունը:


Հայաստանում գործող 22 բանկերից 4 խոշորագույն բանկերի ակտիվների, պարտավորությունների և կապիտալի մասնաբաժինները տարեսկզբի համեմատ աճել են համապատասխանաբար 2.7, 3.1 և 1.0 տոկոսային կետերով և կիսամյակի վերջին կազմել 42.1%, 43.1% և 37.7%:

**Վարկային ներդրումների տարեկան աճը**




**Նվազել են վարկային պորտֆելի աճի տեմպերը**

Բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը 30.06.2013 թ. դրությամբ



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

#### 4.1.2. Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը շարունակում է դիտարկվել որպես ՀՀ բանկային համակարգի կարևոր ռիսկ: Առևտրային բանկերի ռիսկով կշռված ակտիվներում վարկային ռիսկի մասնաբաժինը 92.6% է (31.12.2012 թ. դրությամբ՝ 92.4%): Այս համատեքստում վարկային ռիսկի պատշաճ կառավարումը խիստ կարևորվում է բանկային համակարգի կայունության ապահովման տեսանկյունից:

2013 թ. առաջին կիսամյակում տնտեսությանը տրամադրված վարկերն ավելացել են 4.8%-ով (զծապատկեր «Վարկային ներդրումների տարեկան աճը»): Վարկային պորտֆելի աճ գրանցվել է տնտեսության բոլոր ճյուղերում՝ բացառությամբ արդյունաբերության<sup>19</sup>, որտեղ վարկային պորտֆելը նվազել է 8.7%-ով: Առավել բարձր է եղել ֆինանսական հատվածի, գյուղատնտեսության և սպառողական վարկերի աճի տեմպը՝ համապատասխանաբար 25.8%, 15.8% և 11.4%: Վարկային պորտֆելում մեծ տեսակարար կշիռ ունեն արդյունաբերության, առևտրի և սպառողական վարկերը՝ համապատասխանաբար 20.4%, 20.0% և 19.6%:

30.06.2013 թ. դրությամբ տնտեսությանը տրամադրված վարկերում իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 58.3% և 41.7% (31.12.2012 թ. դրությամբ՝ 60.7% և 39.3%):

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի («հսկվող», «ոչ ստանդարտ» և «կասկածելի» ռիսկային դաս ունեցող վարկեր և դեբիտորական պարտքեր) տեսակարար կշիռն ընդհանուր վարկային պորտֆելում աճել է 2.1 տոկոսային կետով և կազմել 5.6%: Վարկային ներդրումների ճյուղային բաշխվածության տեսանկյունից՝ չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է շինարարության, հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտներին և գյուղատնտեսությանը տրամադրված վարկերում՝ համապատասխանաբար 18.4%, 8.9% և 7.0%:

Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքե-

<sup>19</sup> Հաշվապահական հաշվառման փոփոխության արդյունքում ստանդարտ դասի վարկեր են դուրս բերվել առևտրային բանկերից մեկի հաշվեկշիռից (սակայն վարկերը մնացել են տնտեսությունում) և սկսել են հաշվառվել մայր բանկի հաշվեկշիռում: Սույն փոփոխությունը չդիտարկելու դեպքում արդյունաբերության վարկային ներդրումների աճի տեմպը կկազմեր 7.4%, իսկ տեսակարար կշիռը վարկային պորտֆելում՝ 23.1%:



րում, հաշվարկված ԱՄՅ մեթոդաբանության համաձայն<sup>20</sup>, աճել է 0.8 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով 6.9%:

Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումների և միջին ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ մնացել է անփոփոխ՝ 30.06.2013 թ. դրությամբ կազմել է 0.8%

Ըստ տնտեսության ճյուղերի՝ վարկային ներդրումների շեֆինդալ-Ֆիրշմանի ինդեքսը մնացել է անփոփոխ՝ 0.11 միավոր, ինչը փաստում է բանկային համակարգում վարկային ներդրումների բաշխվածության չափավոր կենտրոնացվածության մասին: Նույն ցուցանիշի մեծությունը, հաշվարկված ըստ բանկերի միջինի, նույնպես մնացել է անփոփոխ՝ 0.17 միավոր: Բանկային համակարգի վարկերի ճյուղային կենտրոնացվածության ցուցանիշի համեմատ բանկերի միջին ցուցանիշի բարձր արժեքը վկայում է որոշ բանկերում վարկավորման ճյուղային կենտրոնացվածության համեմատաբար բարձր մակարդակի մասին: Ընդհանուր վարկային ներդրումներում խոշոր փոխառուներին<sup>21</sup> տրամադրված վարկերի տեսակարար կշիռը տարեսկզբի համեմատ աճել է 1.0 տոկոսային կետով և կիսամյակի վերջին կազմել 26.3%:

**Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ<sup>22</sup>**

30.06.2013 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	Միաժամանակ հսկվող, ոչ ստանդարտացրած և կասկածելի դասերի վարկերի 25%-ի դասակարգում անհուսալի վարկերի	Կասկածելի դասի վարկերի 75%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	Ստանդարտ դասի վարկերի 30%-ի դասակարգում հսկվող դասի վարկերի
Բանկային համակարգի վնասի մեծությունը	19.9 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 5.2%-ը	4.9 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 1.3%-ը	49.3 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 12.8%-ը
Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը սթրես-սցենարի դրսևորման դեպքում	15.5%	16.1%	14.5%


Տարեսկզբին իրականացված սթրես-թեստերի արդյունքների համեմատ՝ հաշվետու կիսամյակի վերջին վարկային ռիսկի սթրես-թեստերի արդյունքները հիմնականում վատացել են՝ պայմանավորված վարկային պորտֆելի որակի որոշակի վատացմամբ: Դիտարկվող վատթարագույն սթրես-սցենարում որոշ բանկերում արձանագրվում են կապիտալի համարժեքության նորմա-

<sup>20</sup> Ըստ ԱՄՅ մեթոդաբանության՝ չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում հաշվարկվում է որպես «ոչ ստանդարտ», «կասկածելի» և «անհուսալի» դասերին պատկանող վարկերի դեբիտորական պարտքերի և ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի հարաբերությունը:

<sup>21</sup> Խոշոր փոխառուների գծով բանկի ռիսկը գերազանցում է բանկի միջին ամսական նորմատիվային ընդհանուր կապիտալի 5%-ը՝ հաշվի առնելով փոխկապվածությունը:


<sup>22</sup> Հաշվետվությունում ներկայացված այս և հաջորդ սթրես-սցենարները չեն կանխատեսում այս կամ այն ռիսկերի դրսևորումը, այլ նպատակ ունեն բացահայտելու ֆինանսական համակարգի թույլ կողմերը, գնահատելու վերջինիս կողմից ռիսկերը չեզոքացնելու ունակությունը:

**Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռները ընդհանուր վարկերում**




Աղբյուրը՝ ԴԴ ԿԲ:

**Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում**




Աղբյուրը՝ ԱՄԳ:

**Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի**




Աղբյուրը՝ ԴԴ ԿԲ:

**Խոշոր փոխառուներին տրամադրված վարկային ներդրումների հարաբերությունը ընդհանուր վարկային ներդրումներին**




**Վարկերի կորուստների դիմամիկ աճի դեպքում ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը խախտող բանկերի քանակը**



**Առևտրային բանկերի իրացվելիության մակարդակը փոքր-ինչ աճել է**

**77 առևտրային բանկերի իրացվելիության նորմատիվների փաստացի և նորմատիվային մեծությունների շարժը**



տիվի խախտման դեպքեր: Այդուհանդերձ, վարկային ռիսկից բխող հնարավոր վնասների հետևանքով անվճարունակության խնդիրների ի հայտ գալու հավանականությունը գնահատվում է չափազանց փոքր:

**Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենար**

30.06.2013 թ.	Դիտարկվող սթրես-սցենար
	Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների 50%-ի կատարում
Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը մինչև շրկային իրավիճակի դրսևորումը	16.3%
Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը շրկային իրավիճակի դրսևորումից հետո	16.1%

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների<sup>23</sup> կատարումից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-թեստի արդյունքներով՝ որևէ բանկ չի խախտում կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջը: Այդպիսով, հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող վարկային ռիսկի ազդեցությունը ֆինանսական կայունության խոցելիության վրա գնահատվում է բավականին թույլ:

**4.1.3. Իրացվելիության ռիսկ**

2013 թ. առաջին կիսամյակում վարկավորման աճի տեմպերի դանդաղմանը զուգընթաց փոքր-ինչ աճել է առևտրային բանկերի իրացվելիության մակարդակը: Առևտրային բանկերի ընդհանուր իրացվելիության և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները տարեսկզբի համեմատ աճել են համապատասխանաբար 0.5 և 1.0 տոկոսային կետով և կիսամյակի վերջին կազմել 26.1% և 127.1% (նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 15% և 60%): Ըստ առանձին բանկերի՝ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները պահպանվել են բավարար մակարդակում, և որևէ բանկում իրացվելիության նորմատիվային պահանջների խախտում չի արձանագրվել:

Ըստ ակտիվների և պարտավորությունների ժամկետային խմբերի՝ մինչև 30 օր (ներառյալ ցպահանջ) և 1 - 3 ամիս մարման ժամկետային խմբերում ակտիվների և պարտավորությունների հարաբերակցության<sup>24</sup> ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 105% և 96% (31.12.2012 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 101.0% և 94.0%): 91 - 365 օր մարման ժամկետային խմբում առկա է որոշակի բացասական ճեղքվածք՝ 67% (31.12.2012 թ. դրությամբ՝ 75%): Վերջինս կարճաժամկետ ավանդները երկարաժամկետ վարկերի ձևափոխելու հետևանք է:

<sup>23</sup> Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները ներառում են վարկային գծերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների չօգտագործված մասը, ակրեդիտիվները, տրամադրված երաշխիքները և երաշխավորությունները:  
<sup>24</sup> Ժամկետային խմբերի համար ակտիվների և պարտավորությունների հարաբերակցության ցուցանիշների հաշվարկում հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները ներառված են 20% կշռով:

Բանկերի ընթացիկ իրացվելիության ապահովման տեսանկյունից հատկապես կարևորվում է մինչև 30 օր (ներառյալ՝ ցպահանջ) ժամկետային խմբում ակտիվների և պարտավորությունների հարաբերակցության ցուցանիշը: Վերջինս, պատմականորեն տատանվելով 95-105%-ի շրջանակներում, ցուցաբերել է աճի միտում: Դիտարկվող օրինաչափությունը դրական է գնահատվում իրացվելիության կառավարման բարելավման համատեքստում:

Վարկային պարտավորությունների կենտրոնացվածության առումով արձանագրվել է ռիսկերի նվազում. կիսամյակի ընթացքում ընդհանուր պարտավորություններում խոշոր պարտավորությունների տեսակարար կշիռը նվազել է 1.2 տոկոսային կետով և կազմել 25.0%:

Առևտրային բանկերի արտաքին վարկային պարտավորությունները նվազել են 12.2%-ով: Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցներն ավելացել են 3.8%-ով և կազմել ընդհանուր արտաքին վարկային պարտավորությունների 43.5%-ը:

Առևտրային բանկերի հիմնական վարկատու երկրներն են՝ Ռուսաստանը՝ 19.6%, Լյուքսեմբուրգը՝ 8.3%, Նիդեռլանդները՝ 7.1%, Գերմանիան՝ 5.1%: Երկարաժամկետ պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 91.4%, ինչը, առևտրային բանկերի տեսանկյունից, զրեթե բացառում է այդ պարտավորությունների վերաֆինանսավորման հետ կապված ռիսկերը:


**Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենարներ**

30.06.2013 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի մարում	Ցպահանջ միջոցների 25%-ի մարում	Ցպահանջ միջոցների 25%-ի և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի մարում
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ	24.2%	23.9%	19.3%
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ	100.4%	131.9%	100.5%

Տարեսկզբին իրականացված սթրես-թեստերի արդյունքների համեմատ՝ հաշվետու կիսամյակի վերջին իրացվելիության ռիսկի սթրես-թեստերի արդյունքները բարելավվել են՝ պայմանավորված վարկային պորտֆելի աճի տեմպերի դանդաղման պայմաններում իրացվելիության մակարդակի աճով:


Դիտարկվող վատթարագույն շոկային իրավիճակներում (ցպահանջ միջոցների 25%-ի և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի միաժամանակ մարում) որոշ բանկերում արձանագրվում են ընդհանուր իրացվելիության և ընթացիկ իրացվելիության նորմատիվների խախտումներ: Այդուհանդերձ, իրացվելիության նորմատիվներ խախտող բանկերի բարձր իրացվելի ակտիվները ամբողջությամբ բավարար են պարտավորությունների արտահոսքը ծածկելու համար:

**Բանկային համակարգի ակտիվների հարաբերությունը պարտավորություններին՝ ըստ մարմանը մնացած ժամկետայնությունների**



Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:


**Բանկային համակարգի խոշոր պարտավորությունների հարաբերությունը ընդհանուր պարտավորություններին**



Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների արտահոսքի դեպքում իրացվելիության նորմատիվները խախտող առևտրային բանկերի քանակը

Բանկերի քանակը



Աղբյուրը՝ ԴԴ ԿԲ:

**Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար**


30.06.2013 թ.	Դիտարկվող սթրես-սցենար
	Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների 50%-ի կատարում
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ ընդհանուր ակտիվներ	22.6%
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ	110.2%

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների կատարումից բխող իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-թեստի արդյունքների համաձայն՝ որոշ բանկերում արձանագրվում է ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվների խախտում, այնուամենայնիվ վերջիններիս նորմատիվային ցուցանիշները նվազագույն սահմանաչափին մոտ են: Այսպիսով, ֆինանսական կայունության վրա ազդեցության տեսանկյունից, հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող իրացվելիության ռիսկը գնահատվում է ոչ մշանակալի:

**Շուկայական ռիսկի հնարավոր ազդեցությունը ֆինանսական կայունության վրա գնահատվում է բավականին թույլ...**

Բանկային համակարգի՝ արտարժույթի առուվաճառքից և վերագնահատումից ստացված զուտ եկամուտները

Մին ԴԴ դրամ



Աղբյուրը՝ ԴԴ ԿԲ:

**4.1.4. Շուկայական ռիսկ**

*Արտարժույթային ռիսկ*

2013 թ. առաջին կիսամյակում ՀՀ դրամի՝ այլ արժույթների նկատմամբ փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգը, արտարժույթի վերագնահատման արդյունքում, ունեցել է 112 մլն դրամի վնաս (կամ ընդհանուր նորմատիվային կապիտալի 0.03%-ը), ընդ որում՝ արտարժույթի վերագնահատման արդյունքում վնաս է ունեցել 14 բանկ, իսկ օգուտ՝ 7 բանկ: Միաժամանակ, բանկային համակարգը արտարժույթի առուվաճառքի գործառնություններից ապահովել է 6.8 մլրդ դրամի զուտ եկամուտ:

Ընդհանուր վարկերում արտարժույթային վարկերի տեսակարար կշիռը տարեսկզբի համեմատ նվազել է 0.7 տոկոսային կետով և կազմել 64.9%: Արտարժույթային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր ավանդներում աճել է 2.6 տոկոսային կետով և կազմել 72.9%:

30.06.2013 թ. դրությամբ բանկային համակարգի արտարժույթային զուտ դիրքը (ածանցյալ գործիքները ներառյալ) կազմել է դրական 2.0 մլրդ դրամ կամ ընդհանուր նորմատիվային կապիտալի 0.5 %-ը (31.12.2012 թ. դրությամբ՝ դրական 3.4 մլրդ դրամ կամ ընդհանուր նորմատիվային կապիտալի 0.9%-ը):

Արտարժույթային ռիսկի գնահատման սթրես-թեստում<sup>25</sup> դիտարկվող հնարավոր վատագույն սթրես-սցենարների դրսևորման դեպքում արտարժույթային բաց դիրքի հետևանքով բանկերի հնարավոր կորուստները նշանակալի չեն, իսկ ֆինանսական կայունության խոցելիության վրա դրանց ազդեցությունը՝ թույլ:

<sup>25</sup> Դիտարկվող սթրես-սցենարներով և VaR մոդելով (վերջինս չի համարվում սթրես-սցենար, քանի որ VaR-ի հաշվարկում հաշվի են առնվում արտարժույթների փոխարժեքների պատմական շարքերը) գնահատված կորուստների հաշվարկման հիմքում ընկած են 30.06.2013 թ. դրությամբ բանկերի արտարժույթային դիրքերը:

**Արտարժույթային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ**

30.06.2013 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	ԱՄՆ դոլարի նկատմամբ 37 դրամի յուրաքանչյուր 5%-ով արժեզրկման (արժևորման) դեպքում օգուտ/վնաս	Եվրոյի նկատմամբ 37 դրամի յուրաքանչյուր 5%-ով արժեզրկման (արժևորման) դեպքում օգուտ/վնաս	Հնարավոր առավելագույն տասնօրյա վնասը՝ գնահատված VaR մոդելով
Բանկային համակարգի օգուտը/վնասը՝ արտարժույթի վերագնահատման արդյունքում	42.0 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.01%-ը (-42.0 մլն դրամ)	9.3 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.002%-ը (-9.3 մլն դրամ)	13.4 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.003%-ը


**Տոկոսադրույքի ռիսկ**

2013 թ. առաջին կիսամյակում պահպանվել են վարկերի տոկոսադրույքների նվազման և ավանդների տոկոսադրույքների աճի միտումները: Եթե և՛ դրամային, և՛ արտարժույթային ավանդների տոկոսադրույքներն աճել են միևնույն չափով, ապա վարկերի պարագայում առավել ցայտուն է եղել դրամային վարկերի տոկոսադրույքների նվազումը: Հաշվետու կիսամյակում դրամային և արտարժույթային վարկերի միջին կշռված անվանական տոկոսադրույքները նվազել են համապատասխանաբար 0.7 և 0.2 տոկոսային կետով: Դրամային և արտարժույթային ժամկետային ավանդների միջին կշռված անվանական տոկոսադրույքները աճել են 0.6-ական տոկոսային կետով: Արդյունքում՝ դրամային և արտարժույթային վարկերի և ավանդների տոկոսադրույքների տարբերությունները (սփրեդները) նվազել են համապատասխանաբար 1.3 և 0.8 տոկոսային կետով:

Վարկերի տոկոսադրույքների նվազումը և ավանդների տոկոսադրույքների աճը մեծապես պայմանավորված են բանկային համակարգում մրցակցության խորացմամբ:

Բանկային համակարգի ակտիվների և պարտավորությունների ներկա արժեքի միջին կշռված ժամկետայնության (դյուրացիա) ճեղքվածքը գրեթե փակ է և տատանվում է կես տարվա շրջանակներում, ինչը ենթադրում է, որ շուկայական տոկոսադրույքների հնարավոր տատանումները բանկային համակարգին զգալի վնասներ չեն պատճառի:

**Բանկային համակարգի ավանդների և վարկերի միջին տոկոսադրույքները**



Աղբյուրը՝ 37 ԿԲ:

**Տոկոսադրույքի ռիսկի գնահատման սթրես-սցենարներ**

30.06.2013 թ.	Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով նվազման (աճի) ազդեցությունը կապիտալի տնտեսական արժեքի վրա՝ գնահատված «դյուրացիայի մեթոդով»	Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով նվազման (աճի) դեպքում առաջիկա երեք ամսվա զուտ տոկոսային եկամտի՝ սպասվող եկամտից շեղում՝ գնահատված «տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի մեթոդով»
Բանկային համակարգի օգուտ/վնաս	2.3 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.6%-ը (-2.3 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.6%-ը)	76.4 մլն դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.02%-ը (-76.4 մլն դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.02%-ը)

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման վատատեսական սթրես-թեստերի արդյունքների համաձայն՝ ըստ առանձին բանկերի շուկայական տոկոսադրույքի տատանումների արդյունքում հնարավոր կորուստները կապիտալի նկատմամբ տատանվում են միջինում 1.7%-ի շրջանակներում: Այս համատեքստում շուկայական տոկոսադրույքների տատանումների արդյունքում բանկային համակարգի հնարավոր վնասները նշանակալի չեն, և դրանց ազդեցությունը ֆինանսական կայունության վրա գնահատվում է ոչ խոցելի:


### Գնային ռիսկ

2013 թվականի առաջին կիսամյակում պահպանվել է ընդհանուր ակտիվներում շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռը նվազման միտումը: Այդ ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռը տարեսկզբի համեմատ նվազել է 0.2 տոկոսային կետով և կազմել 4.7%:

Շուկայական տոկոսադրույքների տատանումների արդյունքում շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից բանկային համակարգը ունեցել է 1.1 մլրդ դրամ զուտ եկամուտ, ընդ որում՝ վերագնահատումից վնաս է կրել 2 բանկ, իսկ օգուտ՝ 10 բանկ:

Անշարժ գույքի գների տատանումներով պայմանավորված ռիսկերը պահպանվել են կառավարելի շրջանակներում: ՀՀ տարածքում գործող բանկերը շարունակել են հիփոթեքային վարկեր հիմնականում տրամադրել անշարժ գույքի շուկայական արժեքի 60-80%-ից ոչ ավելի (Loan to Value ratio), կիրառել վարկառուների վարկունակության գնահատման բավականին խիստ մոտեցում: Բանկերի կողմից ընդունված վերոնշյալ սահմանափակումները էականորեն զսպում են անշարժ գույքի գների անկումից հնարավոր վարկային կորուստների ռիսկը:

**Ընդհանուր ակտիվներում շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռը**



— Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում (աջ առանցք)

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

### Անշարժ գույքի գների փոփոխության սթրես-սցենարներ

Անշարժ գույքի 30% արժեզրկման սցենար	30.06.2013 թ.
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված բանկի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերագնահատմամբ (գնային ռիսկ)	11.3 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 2.9%-ը)
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված սթրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի <sup>26</sup> 30%-ի չվերադարձմամբ (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի՝ արժեզրկված գնով իրացումը) (վարկային ռիսկ)	3.6 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 0.9%-ը)
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված սթրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի 100%-ով չվերադարձմամբ (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի՝ արժեզրկված գնով իրացումը) (վարկային ռիսկ)	11.9 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 3.1%-ը)

Անշարժ գույքի 30% արժեզրկման սթրես-սցենարի դրսևորման դեպքում բանկերի հնարավոր առավելագույն կորուստները

<sup>26</sup> խոցելի վարկային պորտֆելը բանկի այն վարկերի մնացորդների հանրագումարն է, որոնց մնացորդային մեծությունները գերազանցում են դրանց դիմաց գրավադրված անշարժ գույքի 30% արժեզրկված արժեքները:



(գնային և վերջինիցս ածանցված վարկային ռիսկերի տեսանկյունից) աճի միտում ունեն՝ հիմնականում պայմանավորված ընդհանուր նորմատիվային կապիտալի նկատմամբ անշարժ գույքով ապահովված վարկերի առաջանցիկ աճի տեմպով: Այնուամենայնիվ, անշարժ գույքի գների տատանողականությունը մեծ չէ (եթե դիտարկենք վերջին երկու-երեք տարիների զարգացումները) և դրանից բխող վարկային և գնային ռիսկի ազդեցությունը ֆինանսական կայունության տեսանկյունից՝ ոչ խոցելի:

#### 4.1.5. Կապիտալի համարժեքություն և եկամտաբերություն

2013 թ. առաջին կիսամյակում դանդաղել են առևտրային բանկերի կապիտալի համարժեքության նվազման տեմպերը՝ պայմանավորված վարկավորման աճի տեմպերի դանդաղմամբ: Կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը տարեսկզբի համեմատ նվազել է 0.5 տոկոսային կետով և կազմել 16.3% (նվազագույն սահմանաչափը՝ 12.0%)՝ հիմնականում պայմանավորված վարկային պորտֆելի որակի վատթարացման հետևանքով ընդհանուր նորմատիվային կապիտալի նկատմամբ ռիսկով կշռված ակտիվների առաջանցիկ աճով: Այդուհանդերձ, բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը շարունակում է պահպանվել նվազագույն սահմանաչափից բավականին բարձր, ինչը բանկային համակարգին հնարավորություն է ընձեռում ռիսկերը չեզոքացնելու սեփական միջոցների հաշվին: Առանձին բանկերը ևս բավարար կապիտալացված են, և կիսամյակի ընթացքում որևէ բանկում չի արձանագրվել կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջի խախտում:

Առևտրային բանկերի ընդհանուր նորմատիվային կապիտալը տարեսկզբի համեմատ ավելացել է 5.0%-ով և կիսամյակի վերջին կազմել 386.9 մլրդ դրամ: Ընդհանուր նորմատիվային կապիտալի որակական կառուցվածքի առումով՝ ընդհանուր նորմատիվային կապիտալում շարունակում է բավականին բարձր մնալ հիմնական նորմատիվային կապիտալի մասնաբաժինը՝ 89.7% (31.12.2012 թ. դրությամբ 90.7%)՝ փաստելով ընդհանուր նորմատիվային կապիտալի ռիսկերի՝ կլանման բարձր ունակության մասին:

2013 թ. առաջին կիսամյակում նվազել է նաև բանկային համակարգի շահութաբերության մակարդակը՝ հիմնականում պայմանավորված վարկային պորտֆելի որակի վատթարացմամբ և զուտ տոկոսային մարժայի<sup>27</sup> նվազմամբ: Կիսամյակի ընթացքում բանկային համակարգի զուտ շահույթը՝ հաշվարկված վերահսկողական հաշվետվություններին համապատասխան<sup>28</sup>, կազմել է 12.1 մլրդ դրամ, ընդ որում՝ շահույթով է աշխատել 19, իսկ վնասով՝ 3 բանկ:


Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ՝ բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) և շահութաբերությունը ըստ կապիտալի (ROE) նվազել են համապատասխանաբար 0.5 և 2.3 տոկոսային կետով և կազմել 1.0% և 6.0%:

<sup>27</sup> Զուտ տոկոսային մարժան հաշվարկված է որպես զուտ տոկոսային եկամուտների և ակտիվների հարաբերակցություն:


<sup>28</sup> Տարբերվում է ՀՀՄՍ-ից հիմնականում ստանդարտ ակտիվների գծով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումների մասով:

Առևտրային բանկերի կապիտալացվածությունը շարունակում է պահպանվել բավարար մակարդակում


Նորմատիվային ընդհանուր կապիտալի կառուցվածքը



Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը




Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները




Աղբյուրը՝ ԴԴ ԿԲ:


**Բանկային համակարգի եկամուտները և ծախսերը**



**Բանկային համակարգի ROA-ն Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում**



**Բանկային համակարգի ROE-ն Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում**



2013 թ. առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, բանկային համակարգի համախառն եկամուտներն ավելացել են 58.6%-ով և կազմել 278.7 մլրդ դրամ, իսկ համախառն ծախսերը՝ 68.5%-ով և կազմել 262.5 մլրդ դրամ: Եկամուտների և ծախսերի կառուցվածքում աճել են ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումների և վերադարձների տեսակարար կշիռները: Եթե եկամուտների կառուցվածքում հիմնականում նվազել է տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը, ապա ծախսերի կառուցվածքում հավասարապես նվազել են տոկոսային և ոչ տոկոսային ծախսերի տեսակարար կշիռները: Եկամուտների և ծախսերի կառուցվածքային փոփոխությունները հիմնականում պայմանավորված են վարկային պորտֆելում չաշխատող վարկերի տեսակարար կշռի համեմատաբար բարձր տատանողականությամբ:

Բանկային համակարգի շահույթը, հաշվարկված ըստ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ), կազմել է 20.9 մլրդ դրամ, և այս դեպքում շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) կազմել է 1.6%, իսկ շահութաբերությունն ըստ կապիտալի (ROE)՝ 9.4%:

**4.2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՀՀ ֆինանսական համակարգի երկրորդ խոշոր հատվածը վարկային կազմակերպություններն են, որոնց ակտիվները կազմում են ֆինանսական համակարգի ակտիվների 6.4%-ը: Դիտարկվող ժամանակահատվածում վարկային կազմակերպություններն ապահովել են ակտիվների, պարտավորությունների և կապիտալի զգալի աճ:

**Վարկային կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և շահույթի մեծությունները**

(հազար ՀՀ դրամ)

Ցուցանիշ	31.12.2012	30.06.2013	Աճ (%)
Ակտիվներ	168,530,773	189,590,102	12.5%
Պարտավորություններ	105,653,830	117,135,374	10.9%
Կապիտալ	62,877,084	72,454,728	15.2%
Զուտ շահույթ	4,847,791	3,231,719	X

2013 թ. առաջին կիսամյակում վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի աճի տեմպը 2.7 տոկոսային կետով գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը (լեռիջի ցուցանիշ) աճել է 0.9 տոկոսային կետով և կազմել 38.2%:

Վարկային կազմակերպությունների շահութաբերության մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրեթե չի փոփոխվել: 2013 թվականի առաջին կիսամյակում վարկային կազմակերպությունների զուտ շահույթը, հաշվարկված ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական հաշվետվությունների հիման վրա, կազմել է 3.2 մլրդ դրամ, ընդ որում՝ 27 վարկային կազմակերպություն աշխատել է շահույթով, իսկ 6 վարկային կազմակերպություն՝ վնասով: Վարկային կազմակերպությունների՝ ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական



հաշվետվությունների հիման վրա հաշվարկված շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) և շահութաբերությունն ըստ կապիտալի (ROE) համապատասխանաբար կազմել են 3.6% և 9.3% (30.06.2012 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 3.4% և 9.5%):

Վարկային կազմակերպությունների շահույթը, հաշվարկված ըստ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՐՄՍ), կազմել է 3.3 մլրդ դրամ, և այս դեպքում շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) և շահութաբերությունն ըստ կապիտալի (ROE) կազմել են համապատասխանաբար 3.5 % և 8.8%:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ վարկային կազմակերպությունների չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի (հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի դասի վարկեր և դեբիտորական պարտքեր) տեսակարար կշիռը տարեսկզբի համեմատ աճել է 0.8 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով 4.5%: Վարկերի ճյուղային բաշխվածության տեսանկյունից՝ չաշխատող վարկերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներին, շինարարությանը և տրանսպորտի ու կապի ոլորտին տրամադրված վարկերում, համապատասխանաբար՝ 11.5%, 10.7 % և 8.5%:

Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը, հաշվարկված ԱՄՅ մեթոդաբանությամբ (ստանդարտ, կասկածելի, անհուսալի դասի վարկեր և դեբիտորական պարտքեր), գրեթե չի փոփոխվել՝ կիսամյակի վերջին կազմելով 5.0 %:

2013 թ. առաջին կիսամյակում, նախորդ տարվա համեմատ, ակտիվների հնարավոր կորստի պահուստներին կատարված զուտ մասհանումների մեծության և միջին տարեկան ընդհանուր ակտիվների մեծության հարաբերակցությունը նվազել է 0.7 տոկոսային կետով և կազմել 0.6%:


Իրացվելիության տեսանկյունից՝ ակտիվների և պարտավորությունների բոլոր ժամկետային զամբյուղներում (մինչև 180 օր /ներառյալ՝ ցպահանջ/, 180 օրից մինչև մեկ տարի, 1 տարուց ավելի) ակտիվների ծավալները գերազանցել են պարտավորությունների ծավալները՝ վկայելով, այլ հավասար պայմաններում, վարկային կազմակերպությունների իրացվելիության ցածր ռիսկի մասին:

**Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ<sup>29</sup>**

30.06.2013 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	Միաժամանակ հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի վարկերի 25%-ի դասակարգում անհուսալի վարկերի	Կասկածելի դասի վարկերի 75%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	Ստանդարտ դասի վարկերի 30%-ի դասակարգում հսկվող դասի վարկերի
Վարկային կազմակերպությունների ընդհանուր վնասի մեծությունը	1.4 մլրդ դրամ կամ նորմատիվային կապիտալի 2.0%-ը	511.1 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.7%-ը	3.3 մլրդ դրամ կամ նորմատիվային կապիտալի 4.7%-ը

Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

**Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդն ըստ տնտեսության ճյուղերի**




Աղբյուրը՝ ԱՄԳ:

<sup>29</sup> Սթրես-սցենարները կառուցված են վարկային կազմակերպությունների վարկերի անփոփոխ ծավալների և գրավադրված գույքի անտեսման վարկածով (ըստ որի՝ վարկերն անհուսալի դասակարգվելու սցենարում վարկերի դիմաց գրավադրված անշարժ գույքի օտարման հնարավորությունը չի դիտարկվում):

Բանկային համակարգի համեմատ՝ վարկային կազմակերպությունների կապիտալացումն ավելի բարձր է, և, ըստ տարբեր սթրես-սցենարների, վարկային կազմակերպությունները լիովին ունակ են կլանելու հնարավոր վնասները:

#### 4.3. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Ներդրումային ընկերությունների կապիտալ համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ակտիվների կառուցվածքը 30.06.2013 թ. դրությամբ



2013 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են ներդրումային ծառայություն մատուցող 21 բանկ, 9 ներդրումային ընկերություն և 1 ներդրումային ֆոնդի կառավարիչ:

2013 թվականի առաջին կիսամյակում, տարվա վերջի համեմատ, ներդրումային ընկերությունների ակտիվներն ավելացել են 16.4%-ով՝ կազմելով 27.5 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալը՝ 9.7%-ով՝ կազմելով 4.2 մլրդ դրամ: 30.06.2013 թ. դրությամբ ներդրումային ընկերությունների ընդհանուր շահույթը կազմել է 309 մլն դրամ, ընդ որում՝ շահույթ են ապահովել ընկերություններից 5-ը, իսկ 4 ընկերություն կիսամյակն ավարտել է վնասով:

30.06.2013 թ. դրությամբ ներդրումային ընկերությունների վարկային ռիսկը կազմել է ռիսկով կշռված ակտիվների 59.7%-ը, շուկայական ռիսկը՝ 38.3%-ը, իսկ գործառնական ռիսկը՝ 2%-ը: Ներդրումային ընկերությունների շուկայական ռիսկի կառուցվածքում գերակշռել է տոկոսադրույքի ռիսկը՝ կազմելով 72.9%, արտարժույթային և բաժնային արժեթղթերի գնային ռիսկերը կազմել են համապատասխանաբար 26.4% և 0.7%:

Կիսամյակի վերջի դրությամբ կարգավորվող շուկայում առուվաճառքին թույլատրված են եղել 14 թողարկողների 19 արժեթղթեր, ընդ որում՝ թողարկողներից 4-ը ֆինանսական կազմակերպություններ են, որոնց բաժին է ընկել թողարկված բաժնային արժեթղթերի 45%-ը: Բաժնետոմսերի ընդհանուր ծավալը 53.4 մլրդ դրամ է, իսկ պարտատոմսերինը՝ 2.8 մլրդ դրամ: Թողարկողներից մեկը հաշվետու է ինչպես բաժնետոմսերի, այնպես էլ պարտատոմսերի գծով:

30.06.2013 թ. դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում վարվում են 1929 անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրներ, որոնց թողարկողների թիվը կազմում է 1925, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող արժեթղթերի սեփականատերերի թիվը՝ 112415 մարդ:

#### 4.4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2013 թվականի առաջին կիսամյակի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա է ունեցել 9 ապահովագրական ընկերություն<sup>30</sup>:

<sup>30</sup> 30.06.2013 թ. ամփոփված են փաստացի գործող և հաշվետու 7 ապահովագրական ընկերությունների ցուցանիշները:

Կիսամյակի ընթացքում ապահովագրական ընկերությունների ակտիվներն ավելացել են 31.0%-ով և 30.06.2013 թ. կազմել 50.2 մլրդ դրամ, պարտավորություններն ավելացել են 45.7%-ով՝ կազմելով 35.9 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալն աճել է 4.4%-ով՝ կազմելով 14.3 մլրդ դրամ: 2013 թ. առաջին կիսամյակում ՀՀ ֆինանսական համակարգում ապահովագրական ընկերությունների մասնաբաժինը աճել է 0.1 տոկոսային կետով՝ 30.06.2013 թ. դրությամբ կազմելով ֆինանսական համակարգի ակտիվների 1.7%-ը: Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող հիմնական ցուցանիշը՝ հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը, 2013 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 4.7%-ով՝ կազմելով 22.7 մլրդ դրամ (նախորդ տարվա առաջին կիսամյակում նշված ցուցանիշի աճը կազմել էր 58.8%):

Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող մյուս ցուցանիշը՝ ապահովագրավճարներ/ՀՆԱ հարաբերակցությունը (տարեկանացված), 30.06.2013 թ. կազմել է 0.84%՝ 31.12.2012 թ. համեմատ նվազելով 0.1 տոկոսային կետով<sup>31</sup>: Ինչ վերաբերում է բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ապահովագրավճարներին, ապա այս ցուցանիշը 2013 թվականի հունիսին կազմել է 10,749 դրամ<sup>32</sup>, 2012 թվականի դեկտեմբերի 10,824 դրամի փոխարեն:

Ապահովագրական ընկերությունների վնասաբերության ցուցանիշը 2013 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա համեմատ, աճել է 2.2 տոկոսային կետով և կազմել 61.5%<sup>33</sup>: Ապահովագրական ընկերությունների վնասաբերության ցուցանիշի աճը զուգակցվել է ծախսատարության ցուցանիշի նվազման հետ, որը 2013 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա համեմատ, նվազել է 2.1 տոկոսային կետով և կազմել 30.1%<sup>34</sup>: վկայելով ապահովագրական համակարգի գործառնական արդյունավետության աճի մասին:

Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների և վճարունակության պահանջվող մեծության տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 42.1% և 57.9%: Կապիտալի համարժեքության նորմատիվը 30.06.2013 թ. դրությամբ կազմել է 125.4%՝ գերազանցելով պահանջվող նվազագույն սահմանաչափը 25.4 տոկոսային կետով (կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափը 100% է):

### Վճարունակության ռիսկ

Ստորև դիտարկվող հնարավոր սթրես-սցենարների (հատուցումների հաճախականության աճ՝ 10% և հատուցվող գումար-


<sup>31</sup> 2012 թ. տվյալներով՝ զարգացած արդյունաբերական երկրներում ոչ կյանքի ապահովագրության գծով «Ապահովագրավճարներ / ՀՆԱ» ցուցանիշը միջինում կազմել է 3.61%, զարգացող երկրներում՝ 1.26% (աղբյուրը՝ Swiss Re, Sigma No 3/2013, մայիս 2013):

<sup>32</sup> 2012 թ. տվյալներով՝ զարգացած արդյունաբերությամբ երկրներում մեկ շնչին բաժին է ընկնում միջինում 633,708 դրամ կամ 1,545 ԱՄՆ դոլար ապահովագրավճար, զարգացող երկրներում՝ 23,469 դրամ կամ 57 ԱՄՆ դոլար ապահովագրավճար (աղբյուրը՝ Swiss Re, sigma No 3/2013, May 2013):

<sup>33</sup> Վնասաբերության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ (զուտ հաշվեգրված հատուցումներ + զուտ հատկացումներ տեխնիկական պահուստների (բացառությամբ՝ ՉԱՊ) + այլ գործառնական ծախսեր ապահովագրության գծով) / (վաստակած ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով հետվերադարձվող գումարներ):

<sup>34</sup> Ծախսատարության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ ոչ տոկոսային ծախսեր / (վաստակած ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով հետվերադարձվող գումարներ):


Ապահովագրական համակարգի ակտիվների կառուցվածքը 30.06.2013 թ. դրությամբ



1. Ավանդներ բանկերում, 2. Ստացվելիք գումարներ ուղղակի ապահովագրության գծով, 3. Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր, 4. Ապագա ժամանակաշրջանի ծախսեր և ապահովագրության գծով կանխավճարներ, 5. Հիմնական միջոցներ, 6. Վերաապահովագրողների մասնաբաժինն ապահովագրական պահուստներում, 7. Պետական և ոչ պետական արժեթղթեր, 8. Տրանսպորտ փոխառություններ, 9. Բանկային հաշիվներ, 10. Հատուցումների գծով պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ, 11. Այլ ակտիվներ


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

ՀՀ ապահովագրական համակարգի հիմնական բնութագրիչները



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:


Ապահովագրավճարներ / ՀՆԱ հարաբերակցությունը Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում (2012 թ.)



1. Վրաստան, 2. Ուկրաինա, 3. Ռումինիա, 4. Թուրքիա, 5. Ռուսաստան, 6. Ղազախստան, 7. Ադրբեջան, 8. Հայաստան-2012, 9. Հայաստան-30.06.2013


Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Swiss Re, Sigma No 3/2012:

**Ապահովագրական համակարգի վնասաբերության և ծախսատարության ցուցանիշները**



Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

**Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների և վճարունակության պահանջվող մեծության տեսակարար կշիռները 30.06.2013 թ. դրությամբ**



Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

ների աճ՝ 5%) դրսևորման դեպքում գնահատվել է ապահովագրական ընկերությունների վճարունակության մակարդակի փոփոխությունը: Արդյունքները վկայում են, որ վճարունակության մակարդակը զգալի փոփոխությունների չի ենթարկվի, և ապահովագրական համակարգի՝ ֆինանսական կայունության տեսանկյունից ռիսկերի առաջացման հավանականությունը շատ փոքր է:

**Վճարունակության գնահատման սթրես-սցենար**

30.06.2013 թ.	Դիտարկվող սթրես-սցենար
	Հատուցումների համախառնության աճ՝ 10% և հատուցվող գումարների աճ՝ 5%
Ապահովագրական համակարգի չվաստակած ապահովագրավճարների պահուստի (ՉԱՊ-ի) անհրաժեշտ աճ սթրես-սցենարի դրսևորման դեպքում	112.1%

Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

**Վարկային ռիսկ**

Ապահովագրական համակարգի միջոցների տեղաբաշխումը ցածր ռիսկային ակտիվներում հնարավորություն է տալիս ներդրումային ռիսկը պահպանելու ցածր մակարդակում: Տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվները հիմնականում տեղաբաշխված են բանկային ժամկետային և ցապահանջ ավանդներում, ՀՀ պետական և ոչ պետական պարտատոմսերում:

**Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ**

30.06.2013 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	Ստանդարտ դասի ակտիվների 30%-ի դասակարգում հսկվող դասի	Ստանդարտ դասի ակտիվների 5%-ի դասակարգում անհուսալի դասի	ՆՉՊՊ շրջային աճ 25%
Ապահովագրական համակարգի վնասի մեծությունը	1.0 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 6.4%-ը	1.8 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 11.8%-ը	0.5 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 3.6%-ը
Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը սթրես-սցենարի դրսևորման դեպքում	118.5%	112.6%	120.9%

Աղբյուրը՝ ԳԳ ԿԲ:

Վարկային ռիսկի գնահատման սթրես-թեստերի արդյունքները ցույց են տալիս, որ ապահովագրական համակարգի հնարավոր կորստի մեծությունը ցածր է:

**Արտարժույթային ռիսկ**

Արտարժույթային ռիսկի գնահատման սթրես-թեստերի արդյունքները վկայում են, որ արտարժույթային ռիսկից ապահովագրական ընկերությունների հնարավոր կորուստները նշանակալի չեն:

**Արտարժույթային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ**<sup>35</sup>

30.06.2013 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 1%-ով արժեզրկման (արժևորման) դեպքում օգուտ (վնաս)	Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 1%-ով արժեզրկման (արժևորման) դեպքում օգուտ (վնաս)	Հնարավոր առավելագույն տասնօրյա վնասը՝ գնահատված VaR մոդելով
Ապահովագրական համակարգի օգուտը / վնասը արտարժույթի վերագնահատման դեպքում	29.5 մլն դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.2 %-ը (-29.5 մլն)	1.0 մլն դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.01%-ը (-1.0 մլն)	38.2 մլն դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.3 %-ը

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

**Իրացվելիության ռիսկ**

Ապահովագրական համակարգի իրացվելիության ռիսկի մակարդակը ցածր է, ինչի մասին վկայում է նաև սթրես-սցենարի արձանագրած արդյունքը:

**Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար**

30.06.2013 թ.	Դիտարկվող սթրես-սցենար
	ՆՉՊՊ շուկային աճ 25%
Ապահովագրական համակարգի ՆՉՊՊ-ի անհրաժեշտ աճ սթրես-սցենարի դրսևորման դեպքում	0.5 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 3.6%-ը
Ապահովագրական համակարգի իրացվելիությունը սթրես-սցենարի դրսևորման դեպքում	288.2%

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:

ԱՊՊԱ և սոցիալական փաթեթի շրջանակներում առողջության ապահովագրության համակարգերի ներդրմամբ մեծացել է ապահովագրական շուկայի ակտիվության մակարդակը, սակայն ընդհանուր ապահովագրական շուկայի կշիռը ֆինանսական համակարգում շարունակում է մնալ փոքր: Ապահովագրական ընկերությունների ռիսկերը վերահսկելի շրջանակներում են և ֆինանսական կայունության տեսանկյունից խոցելի չեն:

**ԱՍՓՈՓՈՒՄ**

2013 թվականի առաջին կիսամյակում ՀՀ ֆինանսական հաստատությունների վիճակը ֆինանսապես կայուն է եղել: Ֆինանսական համակարգի հիմնական մասնակից բանկային համակարգում նվազել է վարկերի աճի տեմպը: Միևնույն ժամանակ, արձանագրվել է նաև վարկային պորտֆելի որակի որոշակի վատացում, ինչն անդրադարձել է բանկային համակարգի շահութաբերության վրա: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության ցուցանիշները շարունակում են բարձր մնալ պահանջվող մակարդակներից:

<sup>35</sup> Դիտարկվող սթրես-սցենարներով և VaR մոդելով (վերջինս չի համարվում սթրես-սցենար, քանի որ VaR-ի հաշվարկում հաշվի են առնվում արտարժույթների փոխարժեքների պատմական շարքերը) գնահատված կորուստների հաշվարկում կատարվում է ենթադրություն, որ 10 օրվա ընթացքում ապահովագրական համակարգի արտարժույթային դիրքը չի փոփոխվի:

Ֆինանսական համակարգի մյուս մասնակիցների գործունեության ընդլայնմանը զուգընթաց, նրանց նորմատիվային ցուցանիշները ևս էապես գերազանցել են պահանջվող նվազագույն սահմանաչափերը:

Ամփոփելով կիսամյակը՝ կարելի է փաստել, որ ֆինանսական համակարգի բոլոր մասնակիցների ռիսկերը եղել են կառավարելի շրջանակներում՝ այդպիսով ապահովելով ֆինանսական համակարգի բնականոն գործունեությունը և կայունությունը:

## 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՅՈՒՆՆԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Կարևորելով վճարային համակարգերի նշանակությունը ու ազդեցությունը դրամավարկային քաղաքականության և երկրի ֆինանսական կայունության վրա՝ Կենտրոնական բանկը շարունակում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել համակարգային նշանակություն ունեցող վճարային և արժեթղթերի հաշվարկային համակարգերին և դրանց գործունեությունն ապահովող հեռահաղորդակցման ցանցերին:

Միջբանկային հաշվարկները Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնականում կատարվում են Կենտրոնական բանկի համակարգերով<sup>36</sup>: Հայաստանում իրականացվող միջբանկային վճարումների ծավալի 99%-ից ավելին իրականացվում է Կենտրոնական բանկի համակարգերով:

### 5.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԷԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

2013 թ. առաջին կիսամյակում Կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգով (ԷՎՀ) կատարվել է 3764.1 մլրդ ՀՀ դրամի մոտ 2.4 մլն վճարում:

Համակարգում ռիսկայնությունը դիտարկվում է ստորև ներկայացվող ուղղություններով:

#### Վարկային ռիսկ

Համակարգում հաշվարկային բանկի (Կենտրոնական բանկի) վարկային ռիսկը բացակայում է, քանի որ իր թղթակցային հաշվին միջոցների անբավարարության դեպքում մասնակիցը կարող է օգտվել միջօրյա ռեպո գործիքից, որը ապահովված է ՀՀ պետական պարտատոմսերով, ՀՀ կենտրոնական բանկի պարտատոմսերով և/կամ բարձր վարկանիշ ունեցող կորպորատիվ պարտատոմսերով, իսկ ներգրավված միջոցի չափը հաշվարկվում է պարտատոմսի շուկայական արժեքով նվազեցրած սկզբնական մարժայով (haircut): Միևնույն ժամանակ, բացակայում է նաև ստացող կողմի վարկային ռիսկը, քանի որ վերջինս տեղեկանում է իրեն հասցեագրված վճարման մասին միայն վճարման վերջնական և անվերադարձելի դառնալուց հետո<sup>37</sup>:

#### Իրացվելիության ռիսկ

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է իրացվելիության ռիսկի գնահատման համար կիրառվող սեփական

ԷՎՀ գործունեության մշտադիտարկման (մոնիթորինգի) շրջանակներում արձանագրված ցուցանիշները վկայում են, որ համակարգն անվտանգ է և կայունության տեսակետից հիմնախնդիրներ չի ստեղծվում


ԷՎՀ-ում վարկային ռիսկը բացակայում է

ԷՎՀ-ում իրացվելիության ռիսկի և համակարգային խնդիրների առաջացման հավանականությունը շատ փոքր է

<sup>36</sup> ՀՀ ԿԲ համակարգերով վճարումները ներառում են 47 էլեկտրոնային վճարումների համակարգով (այսուհետ՝ ԷՎՀ) կատարված վճարումները՝ առանց բորսայական գործառնությունների մեծության, ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներով գործարքների հետ կապված վճարումները, ԿԲ ներքին վճարումները, ինչպես նաև ԱրՔա քարտային համակարգի վերջնահաշվարկների հետ կապված վճարումները և Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգով արժեթղթերով գործառնությունների դրամային հաշվարկների հետ կապված վճարումները (այսուհետ՝ ՊԱՀՀՀ): ՀՀ վճարահաշվարկային բնագավառի, այդ թվում՝ համակարգերի վերաբերյալ մանրամասն կարելի է տեղեկանալ «Վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերը Հայաստանի Հանրապետությունում» (2010 թ.) հրապարակումից:


<sup>37</sup> Մանրամասն տես 2007 թ. «Ֆինանսական կայունության հաշվետվություն» և «Վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերը Հայաստանի Հանրապետությունում» հրապարակումները:

**Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշը**



**Աճնշան են նաև իրացվելիության անբավարարության պատճառով մերժումները**

Միջին օրական վճարումների, օրվա սկզբում միջին օրական իրացվելիության և միջին օրական հասանելի իրացվելիության համեմատական վերլուծություն (ըստ բոլոր բանկերի)



**Օրվա ընթացքում վճարումների ժամային բաշխվածության առանձնահատուկ փոփոխություն չի դիտարկվել**

**Օրվա որոշակի ժամերին առկա կուտակումները խնդիրներ չեն առաջացրել**

միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշի<sup>38</sup> կայուն դրական միտում:

Համակարգում օրվա սկզբում միջին իրացվելիությունը մշտապես գերազանցել է միջին օրական վճարումները: Ավելին՝ օրվա սկզբում իրացվելիությունը աճել է (նախորդ կիսամյակի համեմատ), մինչդեռ թղթակցային հաշվի միջին օրական շարժը մնացել է գրեթե նույնը:

Վերը նշված ցուցանիշի տեսակետից իրացվելիության ռիսկը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ ցուցանիշի հաշվարկում ընդգրկված չեն բանկերի հանդիպակաց ստացումները (հաշվին կրեդիտները) և/կամ այլ աղբյուրներից իրացվելիության համալրմանն ուղղված միջոցները:

Իրացվելիության ռիսկի գնահատման համար կարևոր չափանիշներ են նաև համակարգում գրանցված մերժումները և դրանց տեսակարար կշիռը համակարգով կատարվող ընդհանուր վճարումներում:

Իրացվելիության անբավարարության պատճառով մերժումների քանակն ու կշիռը ընդհանուր էՎՀ վճարումներում շարունակաբար է աննշան մնալ. երկու եռամսյակների համար առավելագույնը ծավալային՝ 1.4%, քանակային՝ 0.002%: Հարկ է նշել, որ 2013 թ. երկրորդ եռամսյակում էականորեն նվազել է մերժումների ծավալային կշիռը՝ կազմելով ընդամենը 0.01%:

Վերոնշյալ մերժումները պայմանավորված են մի քանի առանձին դեպքերով և կարող են լինել մասնակիցների կողմից իրացվելիության (վճարային հոսքերի) ոչ ճիշտ կառավարման արդյունք, ինչը չէր կարող անդրադառնալ համակարգի իրացվելիության վրա:

**Վճարումների ժամային բաշխվածությունը**

Օրվա ընթացքում գրանցվում է ինչպես ծավալային, այնպես և քանակային 2 պիկային ժամային միջակայք՝ գործառնական օրվա սկզբին և վերջին:

2013 թ. առաջին կիսամյակում պիկային ժամային միջակայքում իրականացվել է օրվա վճարումների ծավալի 19%-ը (ժամը 10:00-11:00) և քանակի 18%-ը (ժամը 15:00-16:00):

Հաշվետու ժամանակաշրջանում փոքր-ինչ ավելացել է օրվա վերջում կատարված վճարումների քանակային տեսակարար կշիռը, սակայն համակարգի բավարար թողունակության և գործառնական խնդիրների բացակայության շնորհիվ համակարգում խնդիրներ չեն առաջացել:


Հաշվի առնելով նաև իրացվելիության և հասանելիության ցուցանիշների դրական արդյունքները, ինչպես նաև մերժումների աննշան կշիռը ընդհանուր վճարումներում (մանրամասն տես նախորդ ենթաբաժինները)՝ 2013 թ. առաջին կիսամյակի ընթացքում վճարումների անհավասարաչափ բաշխումը և օրվա որոշակի ժամերին կուտակումները խնդիրներ չեն ստեղծել, և ռիսկի

<sup>38</sup> Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշի հաշվարկման հիմքում բանկերի՝ ԴԴ դրամով թղթակցային հաշիվներում օրվա սկզբում առկա իրացվելիության և հաշվով կատարված դեբետների (վճարումների) հարաբերակցությունն է: Ցուցանիշը չի ներառում բանկերի ստացումները (հանդիպակաց վճարումները), որի նպատակն է իրականացնել սթրես - իրավիճակի վերլուծություն՝ գնահատելու համար օրվա ընթացքում լրացուցիչ իրացվելիություն չստանալու պայմաններում բանկերի վճարումների մերժման հավանականությունը. այն է՝ որքանով կարող են բանկերն ապահովել իրենց վճարումները միայն օրվա սկզբում առկա սեփական միջոցների հաշվին: Բանկերի կողմից իրենց հաշիվների՝ կանխիկով ամրագրումները ներառված չեն հաշվարկում: Ցուցանիշը հաշվարկվում է ըստ համակարգի (բոլոր բանկերինը՝ համախառն), և ըստ առանձին բանկերի ցուցանիշները կարող են տարբերվել:




առաջացման հավանականությունն ընդհանուր առմամբ գնահատվում է ցածր:

Միջին կիսամյակային վճարումների ծավալի ժամային բաշխումն օրվա ընթացքում



Միջին կիսամյակային վճարումների քանակի ժամային բաշխումն օրվա ընթացքում



**Համակարգի թողունակությունը**

2013 թ. առաջին կիսամյակում գրանցվել է ժամում վճարումների նկատելի նվազում, հատկապես՝ ժամում 4300 և ավելի վճարում ցուցանիչի գծով (2013 թ. I կիս.՝ 7.3%, 2012 թ. II կիս.՝ 22.7%, I կիս.՝ 15.9%): 2013 թ. սկզբում գրանցված ժամում վճարումների նվազումը հիմնականում պայմանավորվել է ընդհանուր էՎՀ վճարումների քանակի նվազմամբ, որը, սակայն, աստիճանաբար աճել է՝ նպաստելով նաև ժամում 2500 վճարումը գերազանցող ցուցանիչի կշռի ավելացմանը:


2013 թ. առաջին կիսամյակի ընթացքում ժամում վճարումների պիկը գրանցվել է հունվարին՝ 5980 վճ./ ժամում, որը զգալիորեն ցածր է 2012 թ. պիկի ցուցանիչից (8181 վճ./ ժամում փետրվարին): ժամում վճարումների ամսական առավելագույն մեծությունները հաշվետու ժամանակաշրջանում կազմել են 5000 և ավելի վճ./ժամում (2012 թ.՝ հիմնականում 6000 վճ./ժամում):

Պիկ ժամերին կատարված վճարումների տեսակարար կշիռը տվյալ օրվա վճարումների քանակում չի գերազանցել 30%-ը, ծավալում՝ 12%-ը (միայն փետրվարին է դիտարկվել ծավալային պիկի տեսակարար կշռի էական ավելացում՝ օրվա վճարումների 32%-ը):


Թողունակության վերոնշյալ ցուցանիշները և իրականացված նպատակային վերլուծության<sup>39</sup> արդյունքները վկայում են, որ ժամում պիկային մեծությունները հիմնականում պայմանավորված են որոշակի օրերին մի քանի բանկի դրսևորած վարքագծով: Հաշվի առնելով, որ նման դեպքերն ընդհանուր վճարումներում դեռևս մեծ կշիռ չունեն, և այդ ժամանակահատվածում փաստացի գրանցված միջադեպեր չեն եղել, թողունակության հետ կապված ռիսկերի առաջացման հավանականությունը ընդհանուր առմամբ գնահատվում է ցածր:

*Հաշվետու ժամանակաշրջանում նվազել են ժամում վճարումները, և թողունակության հետ կապված ռիսկերի առաջացման հավանականությունը ընդհանուր առմամբ գնահատվում է ցածր*

2500 և ավելի վճարում ժամում ցուցանիչի դիմամիկան և կշիռը տվյալ ամսվա ընդհանուր գործառնական ժամում




Ժամում 2500, 3500 և 4300 սահմանափակ գերազանցող վճարումների դիմամիկան



<sup>39</sup> Վերլուծությունն իրականացվել է ժամում առավելագույն վճարումների (ըստ յուրաքանչյուր ամսվա) բնույթի և վճարող մասնակիցների վարքագծի բացահայտման համար:

**ԷՎԴ-ի գործառնական հասանելիությունը 100% է**

Վճարում/ժամ առավելագույն քանակը՝ ըստ ամիսների



Համակարգի գործառնական հասանելիությունը

Էլեկտրոնային վճարումների համակարգի հասանելիության վրա ազդեցություն ունեցող որևէ նշանակալի միջադեպ 2013 թ. առաջին կիսամյակում չի գրանցվել:

Գրանցվել է էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման «Bank Mail» համակարգի դանդաղման մեկ դեպք, որի պատճառով ԷՎԴ-ում մեկ ժամվա ընթացքում վճարումներ չեն իրականացվել: Չնայած դրան, տվյալ միջադեպը չի անդրադարձել բորսային ուղղված նախնական դեպոզիտային հանձնարարականների՝ սահմանված ժամկետներում կատարման վրա, և այդ օրը չի հանգեցրել գործառնական օրվա երկարաձգման:

Հաշվետու ժամանակաշրջանում ԷՎԴ-ի գործառնական հասանելիությունը կազմել է 100%, «Գործառնական օր» համակարգի հասանելիությունը՝ 100%<sup>40</sup>:

**5.2. ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ**

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2005 թ.: Հիմնադրամը գործում է համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի: Հանդիսանալով երկրի ֆինանսական կայունության համար պատասխանատու հաստատություն՝ նպաստում է ՀՀ բանկային համակարգի հուսալիության, բանկային համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը և ապահովում է ավանդատուների շահերի պաշտպանությունը:

2013 թ. պահպանվել է ֆիզիկական անձանց բանկային ավանդների և երաշխավորված ավանդների աճի միտումը:

2013 թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ, 2012 թ. երկրորդ կիսամյակի վերջի համեմատությամբ, ֆիզիկական անձանց բանկային ավանդների գումարն ավելացել է շուրջ 10.47%-ով, իսկ երաշխավորված ավանդների գումարը՝ 8.73%-ով: Երաշխավորված ավանդ ունեցող ավանդատուների թիվը կիսամյակի վերջի դրությամբ ավելացել է 11.03%-ով և կազմել է 1517175 (նշված հաշվարկում ներառված չեն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում հաշվառվող՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ավանդատուները): ՀՀ բանկային համակարգում ավանդատուների գերակշռող մասը կազմում են միայն ՀՀ դրամով ավանդներ ունեցող ավանդատուները: 2013 թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ միայն ՀՀ դրամով ավանդ ունեցող ավանդատուների կշիռն ավանդատուների ընդհանուր թվի մեջ կազմել է 84.34% և միայն արտարժույթով ավանդ ունեցող ավանդատուների կշիռը՝ 6.55% (նախորդ կիսամյակի համեմատությամբ նշանակալի չի փոփոխվել): 2013 թ. առաջին կիսամյակի վերջին, 2012 թ. երկրորդ կիսամյակի վերջի համեմատությամբ, ՀՀ դրամային ավանդների կշիռն ավելացել է շուրջ 2%-ով և կազմել է 31.33%:

<sup>40</sup> Դանիայի Ազգային բանկի՝ 2008 թ. Ֆինանսական կայունության հաշվետվության մեջ նշվում է, որ համակարգային նշանակություն ունեցող RTGS համակարգերի համար ESCB-ի կողմից սահմանված չափանիշների համաձայն՝ գործառնական հասանելիությունը պետք է շատ բարձր լինի. օրինակ՝ TARGET-ի գործառնական հասանելիությունը 99.65 % էր, ինչը լավ ցուցանիշ է համարվում:

### 5.3 ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ ԵՎ ԱՔՈԱ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

#### 77 ԿԲ վարկային ռեգիստր

2003 թվականի հունվարի 1-ից 77 կենտրոնական բանկի վիճակագրության վարչության կազմում գործում է վարկային ռեգիստրը, որի հիմնական գործառույթն է վարկառուների վերաբերյալ տվյալների հավաքագրումը, ամփոփումն ու տրամադրումը առևտրային բանկերին, վարկային կազմակերպություններին, ինչպես նաև 77 ԿԲ այլ ստորաբաժանումներին: Վարկային ռեգիստրում հաշվառվում են 1.5 մլն դրամը գերազանցող և մինչև 1.5 մլն դրամ, սակայն ժամկետին չմարված և դասակարգված բոլոր վարկերը: 2013 թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ ԿԲ վարկային ռեգիստրի տվյալների բազայում առկա վարկերի թիվը կազմել է 1.517.250, որից 1.403.537-ը ֆիզիկական անձանց, իսկ 113.713-ը իրավաբանական անձանց տրամադրված վարկերն են:


	Գործող	Մարված	Ընդամենը
Ըստ ֆիզիկական անձանց	287440	1116097	1403537
Ըստ իրավաբանական անձանց	17548	96165	113713
<b>Ընդամենը</b>	<b>304988</b>	<b>1212262</b>	<b>1517250</b>

Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ՝ վարկային ռեգիստրում հաշվառվող վարկերի թիվն ավելացել է 321.133-ով: 2013 թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ վարկային ռեգիստրում առկա է եղել տեղեկատվություն 304.988 գործող և 1212262 մարված վարկերի վերաբերյալ: Նախորդ տարվա առաջին կիսամյակում տրամադրվել էր 80.824, իսկ այս տարվա առաջին կիսամյակում՝ 120.725 վարկ, այսինքն՝ աճը կազմել է 49 %, ինչը վկայում է վարկային ակտիվության բարձրացման մասին: Հաշվառվող վարկերի քանակի մեծացմանը զուգընթաց փոխվել են նաև մուտքագրվող տեղեկատվության ծավալները: Մասնավորապես՝ 2013 թ. առաջին կիսամյակում վարկային ռեգիստր տեղեկատվության մուտքի օրական միջինը կազմել է 16.600 գրառում, ինչը 84 %-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

2013 թ. առաջին կիսամյակում ավելացել է նաև հաճախորդների վարկարժանության գնահատման և գործող վարկերի գծով ընթացիկ մոնիթորինգ իրականացնելու նպատակով բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից անցկացված հարցումների քանակը: Կատարվել է 59766 հարցում, ինչը 21.210-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից:


Առաջիկայում նախատեսված են մի շարք մեթոդական և ծրագրային փոփոխություններ՝ կապված վարկային ռեգիստրի գործունեության հետ: Մասնավորապես՝ կատարվում են բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից 77 ԿԲ վարկային ռեգիստր և ԱՔՈԱ վարկային բյուրո ներկայացվող տեղեկատվության միասնական հաշվետվական ձևաչափերի մշակման և տվյալների բազաների նույնականացման աշխատանքներ: Դա կնպաստի բանկերի և վարկային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետության և վարկառուների վերաբերյալ հավաքագրվող տեղեկատվության որակի բարձրացմանը: Աշխատանքներ են կատարվում նաև վերահսկողական և վերլուծական նպատակներով վարկային ռեգիստրից տրամադրվող տվյալների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

2013 թ. առաջին կիսամյակում տրամադրված վարկերի քանակը




Աղբյուրը՝ 77 ԿԲ:

2012 - 2013 թթ. առաջին կիսամյակներում տրամադրված վարկերի քանակը



Աղբյուրը՝ 77 ԿԲ:


2012 - 2013 թթ. առաջին կիսամյակներում ստացված հայտերի քանակը




Աղբյուրը՝ 77 ԿԲ:

*ԱՔՌԱ վարկային բյուրո*


**ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկառուների քանակը (հազար)**



**ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկերի քանակը (հազար)**



**ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից տրամադրված զեկույցների քանակը**



*Աղբյուրը՝ ԱՔՌԱ վարկային բյուրո:*

2013 թ. առաջին կիսամյակում ԱՔՌԱ վարկային բյուրոյի տվյալների բազայում գրանցված հաճախորդների թիվը 2012 թ. դեկտեմբերի համեմատ ավելացել է 2%-ով և հունիսի 30-ի դրությամբ կազմել է 1338866, որոնց 97.6%-ը ֆիզիկական անձինք են:

Տվյալների բազայում առկա վարկերի քանակը 2013 թ. հունիսին, 2012 թ. դեկտեմբերի համեմատ, ավելացել է 10%-ով և հունիսի 30-ի դրությամբ կազմել է 7587770:

Յուրաքանչյուր քաղաքացի կամ իրավաբանական անձ կարող է վարկային բյուրոյից ստանալ տեղեկատվություն իր վարկային պատմության վերաբերյալ: Իր հաճախորդի, գործընկերոջ վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար իրավաբանական անձը պետք է վարկային բյուրոյի հետ կնքի ծառայությունների մատուցման պայմանագիր և ստանա վարկային պատմության սուբյեկտի գրավոր համաձայնությունը:

Վարկային բյուրոն վարկային զեկույցներ սկսել է տրամադրել 2007 թվականի ապրիլից: 2013 թ. առաջին կիսամյակում տրամադրած վարկային զեկույցները 2012 թ. նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 73%-ով:

2012 թ-ից Վարկային բյուրոն տեղեկատվություն է ստանում նաև հեռահաղորդակցական ծառայություններ մատուցող ընկերությունից՝ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ից: ԱՔՌԱ տվյալների բազայում տեղեկատվություն է ներառվում սահմանված ժամկետում չվճարումների վերաբերյալ: Տեղեկատվության շրջանառման կազմակերպման նպատակով բանակցություններ են վարվում հեռահաղորդակցական ծառայություններ մատուցող «ԱրմենՏել», «Օրանժ» ընկերությունների հետ: ԱՔՌԱ վարկային բյուրոն տեղեկատվություն է ստանում նաև ՀՀ ոստիկանության և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հանրային բազաներից: Բանակցություններ են վարվում նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեից՝ սահմանված ժամկետում չվճարված հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման համար:

ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից 2012 թ. ներդրվել է *ԱՔՌԱ Սքոր քարտեր (ԱՔՌԱ հիփոթեքային սքոր, ԱՔՌԱ ավտո սքոր, ԱՔՌԱ քարտային սքոր)* ծառայությունները: ԱՔՌԱ Սքոր քարտերը բնութագրում են տվյալ տեսակի վարկ ունեցող վարկառուների կանխատեսվող վարկարժանությունն առաջիկա ժամանակահատվածում: ԱՔՌԱ Սքոր քարտերը վարկային ռիսկի վիճակագրական և գործառնական մոդելավորման տարբերակներ են, որոնք ենթադրում են վարկառուի վարկային ռիսկի թվային գնահատականի ներկայացում: Վարկային սքորինզը գերազանցապես հենվում է վիճակագրական մեթոդների վրա և հնարավորինս բացառում է փորձագիտական գնահատումների կիրառումը:

ԱՔՌԱ վարկային բյուրոն 2012 թ. ներդրել է ԱՔՌԱ SMS զեկույց ծառայությունը՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի, իսկ 2013 թ-ից՝ նաև «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ համագործակցության շնորհիվ: Այն հնարավորություն է տալիս հնարավորինս արագ ստանալու ամփոփ տեղեկատվություն վարկային պարտավորությունների վերաբերյալ: ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից 2012 թ. մշակվել և ներդրվել է նաև տվյալների մուտքագրման առավել ճկուն՝ ունիվերսալ մոդուլ:

Վարկային բյուրոյի կողմից տնօրինվող տեղեկատվությունը պահպանելու և այլ անձանց կողմից անօրինական օգտագործումը բացառելու նպատակով մշակվել է տվյալների բազայի պահպանման բազմաստիճան կողավորված համակարգ: Համակարգում գրանցվում են բոլոր գործողությունները, կիրառվում է համակարգի մշտադիտարկում՝ կասկածելի և չարտոնված գործողությունները բացառելու, կանխելու համար:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ էլեկտրոնային վճարումների համակարգում վարկային և իրացվելիության ռիսկերը նվազագույնի են հասցված, համակարգի թողունակության մակարդակը բավարար է և ապահովում է օրվա ընթացքում վճարումների անընդհատությունը: Համակարգում գործառնական ռիսկեր չեն գրանցվել՝ համակարգի հասանելիությունը պահպանվել է միջազգայնորեն ընդունելի մակարդակի վրա:

Ընդհանուր առմամբ, ԷՎՀ գործունեությունը գնահատվում է բավարար, և ֆինանսական կայունության տեսակետից՝ վճարահաշվարկային բնագավառի զարգացումները եղել են կառավարելի շրջանակներում՝ չառաջացնելով խոցելի ռիսկեր:

## ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ

<i>Տնտեսական աճի ցուցանիշներն ըստ տարածաշրջանների</i> .....	9
<i>Համաշխարհային առևտրի տարեկան տոկոսային աճը</i> .....	10
<i>Նավթի («բրենթ» տեսակի) գները</i> .....	10
<i>Պղնձի գները</i> .....	11
<i>Մոլիբդենի գները</i> .....	11
<i>Հացահատիկի գները</i> .....	11
<i>Ոսկու գները</i> .....	11
<i>Գնաճը մի շարք երկրներում</i> .....	11
<i>10 տարի ժամկետայնությամբ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը</i> .....	12
<i>Կենտրոնական բանկերի տոկոսադրույքների քաղաքականությունը</i> .....	12
<i>ԱՄՆ դոլարի փոխարժեքը եվրոյի և ՄԲ ֆունտ ստեռլինգի նկատմամբ</i> .....	13
<i>Միջբանկային տոկոսադրույքները</i> .....	13
<i>Տնտեսության հիմնական ճյուղերի տարեկան աճը</i> .....	15
<i>Տնտեսության հիմնական ճյուղերի վարկավորման աճը</i> .....	16
<i>ՀՆԱ ծախսային բաղադրիչները</i> .....	16
<i>ՀՀ պետական բյուջեի պակասուրդ (-) / հավելուրդ (+)</i> .....	17
<i>ՀՀ ներմուծումն ըստ ապրանքախմբերի</i> .....	17
<i>ՀՀ արտահանումն ըստ ապրանքախմբերի</i> .....	17
<i>Հայաստանի արտաքին առևտրի բաշխվածությունն ըստ երկրների</i> .....	18
<i>Զուտ մասնավոր տրանսֆերտներ և սեզոնային աշխատողների վարձատրություն</i> .....	18
<i>Բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային զուտ փոխանցումներ</i> .....	19
<i>Միջին անվանական աշխատավարձ</i> .....	19
<i>Տնային տնտեսությունների պարտքի և եկամուտների ցուցանիշներ</i> .....	19
<i>Տնային տնտեսությունների պարտավորությունների կառուցվածքը</i> .....	20
<i>Բանկերի և վարկային կազմակերպությունների հիփոթեքային և սպառողական վարկային պորտֆելը</i> .....	20
<i>ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների սպառողական վարկային պորտֆելի կառուցվածքը</i> .....	20
<i>Ապագա պայմանների ինդեքսը և դրա բաղադրատարրերը</i> .....	21
<i>Բնակարանների միջին գների ինդեքսը</i> .....	21
<i>Բնակարանների գները երևանում ըստ համայնքների</i> .....	22
<i>Անշարժ գույքի առուվաճառքի ինդեքսը երևանում</i> .....	22
<i>Բնակարանների առուվաճառքի և անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեքային վարկերի քանակի բաշխվածությունը</i> .....	22
<i>Հիփոթեքային վարկերի մասնաբաժինը վարկային պորտֆելում` ըստ երկրների</i> .....	23
<i>Անշարժ գույքի շուկայի վարկավորման ծավալը</i> .....	23
<i>Ռեպո գործառնությունների մասական ծավալները և տոկոսադրույքների մակարդակները</i> .....	25
<i>ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորեորը</i> .....	25
<i>Պետական գանձապետական կարծաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման ծավալները և միջին կշռված եկամտաբերությունները</i> .....	26
<i>ՊՊ առուվաճառքի գործառնությունների և ՊՊ գործառնությունների ծավալ/շրջանառությունում առկա ՊՊ ծավալ հարաբերակցությունը</i> .....	26
<i>Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները</i> .....	27

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված ռեպո գործառնությունները .....	27
Արժեթղթերի կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնությունները ....	27
ՀՀ արժութային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները և փոխարժեքները .....	28
ՀՀ արժութային շուկայում իրականացված գործառնությունները ըստ արժույթների .....	28
Փոխարժեքները ՀՀ արժութային շուկայում .....	28
Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքը ըստ ֆինանսական հաստատությունների .....	30
Բանկային համակարգի կայունության քարտեզ .....	30
Ֆինանսական միջնորդության մակարդակը .....	31
Բանկային համակարգերի ֆինանսական միջնորդության մակարդակը 2012 թ. ....	31
Օտարերկրյա ներդրողների մասնակցությունը ՀՀ բանկային համակարգի կապիտալում .....	31
4 խոշորագույն բանկերի ակտիվների, պարտավորությունների և կապիտալի տեսակարար կշիռները ՀՀ բանկային համակարգում .....	31
Վարկային ներդրումների տարեկան աճը .....	32
Բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը 30.06.2013 թ. դրությամբ .....	32
Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները .....	32
Իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռները ընդհանուր վարկերում ...	33
Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում .....	33
Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի կառուցվածքը ըստ տնտեսության ծյուղերի .....	33
Խոշոր փոխառումներին տրամադրված վարկային ներդրումների հարաբերությունը ընդհանուր վարկային ներդրումներին .....	34
Վարկերի կորուստների դինամիկ աճի դեպքում ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը խախտող բանկերի քանակը .....	34
ՀՀ առևտրային բանկերի իրացվելիության նորմատիվների փաստացի և նորմատիվային մեծությունների շարժը .....	34
Բանկային համակարգի ակտիվների հարաբերությունը պարտավորություններին՝ ըստ մարմանը մնացած ժամկետայնությունների .....	35
Բանկային համակարգի խոշոր պարտավորությունների հարաբերությունը ընդհանուր պարտավորություններին .....	35
Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների արտահոսքի դեպքում իրացվելիության նորմատիվները խախտող առևտրային բանկերի քանակը .....	36
Բանկային համակարգի արտարժույթի առուվաճառքից և վերագնահատումից ստացված զուտ եկամուտները .....	36
Բանկային համակարգի ավանդների և վարկերի միջին տոկոսադրույքները .....	37
Ընդհանուր ակտիվներում շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար նատչելի ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռը .....	38
Նորմատիվային ընդհանուր կապիտալի կառուցվածքը .....	39
Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը .....	39
Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները .....	39
Բանկային համակարգի եկամուտները և ծախսերը .....	40
Բանկային համակարգի ROA-ն Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում .....	40
Բանկային համակարգի ROE-ն Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում .....	40
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդը ըստ տնտեսության ծյուղերի .....	41
Ներդրումային ընկերությունների կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ակտիվների կառուցվածքը 30.06.2013 թ. դրությամբ .....	42
Ապահովագրական համակարգի ակտիվների կառուցվածքը 30.06.2013 թ. դրությամբ .....	43
ՀՀ ապահովագրական համակարգի հիմնական բնութագրիչները .....	43
Ապահովագրավճարներ/ՀՆԱ հարաբերակցությունը Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում (2012 թ.) .....	43

<i>Ապահովագրական համակարգի վնասաբերության և ծախսատարության ցուցանիշները .....</i>	<i>44</i>
<i>Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների և վճարունակության պահանջվող մեծության տեսակարար կշիռը 30.06.2013 թ. դրությամբ .....</i>	<i>44</i>
<i>Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշը .....</i>	<i>48</i>
<i>Միջին օրական վճարումների, օրվա սկզբում միջին օրական իրացվելիության և միջին օրական հասանելի իրացվելիության համեմատական վերլուծություն .....</i>	<i>48</i>
<i>Միջին կիսամյակային վճարումների ծավալի ժամային բաշխումն օրվա ընթացքում .....</i>	<i>49</i>
<i>Միջին կիսամյակային վճարումների քանակի ժամային բաշխումն օրվա ընթացքում .....</i>	<i>49</i>
<i>2500 և ավելի վճարում ժամում ցուցանիշի դինամիկան և կշիռը տվյալ ամսվա ընդհանուր գործառնական ժամում ...</i>	<i>49</i>
<i>ժամում 2500, 3500 և 4300 սահմանաչափերը գերազանցող վճարումների դինամիկան .....</i>	<i>49</i>
<i>Վճարում/ժամ առավելագույն քանակը` ըստ ամիսների .....</i>	<i>50</i>
<i>2013 թ. առաջին կիսամյակում տրամադրված վարկերի քանակը .....</i>	<i>51</i>
<i>2012-2013 թթ. առաջին կիսամյակներում տրամադրված վարկերի քանակը .....</i>	<i>51</i>
<i>2012-2013 թթ. առաջին կիսամյակներում ստացված հայտերի քանակը .....</i>	<i>51</i>
<i>ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկառուների քանակը .....</i>	<i>52</i>
<i>ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկերի քանակը .....</i>	<i>52</i>
<i>ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից տրամադրված գեկույցների քանակը .....</i>	<i>52</i>



## ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

2012 - 2013 թթ. համաշխարհային տնտեսական աճի գնահատման վերանայումները ԱՄՅ կողմից .....	9
ՀՀ արտաքին պետական պարտքը բնութագրող որակական ցուցանիշներ .....	16
Բնակելի շենքերի գործարկումն ըստ ֆինանսավորման աղբյուրների .....	23
30.06.2013 թ. դրությամբ շրջանառությունում գտնվող պետական պարտատոմսերի մոդիֆիկացված դյուրացիայի ցուցանիշը տարբեր ժամկետային խմբերի համար .....	26
30.06.2013 թ. դրությամբ առևտրային բանկերի՝ առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի պետական պարտատոմսերի պորտֆելի մոդիֆիկացված դյուրացիայի ցուցանիշը և եկամտաբերության 1% փոփոխության դեպքում հավանական շահույթ/վնասի մեծությունը տարբեր ժամկետային խմբերի համար .....	26
Բաժնետոմսեր թողարկողների առաջատար եռյակի և հնգյակի կենտրոնացվածությունն ըստ կապիտալացման մակարդակի .....	28
Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից .....	31
Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ .....	33
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենար ...	34
Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենարներ .....	35
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար .....	36
Արտարժույթային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ .....	37
Տոկոսադրույքի ռիսկի գնահատման սթրես-սցենարներ .....	37
Անշարժ գույքի գների փոփոխության սթրես-սցենարներ .....	38
Վարկային կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և շահույթի մեծությունները ..	40
Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ .....	41
Վճարունակության գնահատման սթրես-սցենար .....	44
Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ .....	44
Արտարժույթային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ .....	45
Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար .....	45

## ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

<i>Տնտեսական աճ</i>	Տնտեսության կողմից որոշակի ժամանակահատվածում արտադրվող ապրանքների և ծառայությունների ծավալի աճ:
<i>Գնաճ</i>	Ապրանքների և ծառայությունների գների ընդհանուր մակարդակի աճ:
<i>Սպառողական գների ինդեքս</i>	Անփոփոխ քանակությամբ և որակական հատկանիշներով, հաստատուն սպառողական զանբյուրի շուկայական գներով զուտ արժեքի (գնի) փոփոխության ցուցանիշ, որը հաշվարկվում է ամբողջ բնակչության համար:
<i>Վճարային հաշվեկշիռ</i>	Վիճակագրական հաշվետվություն, որում համակարգված արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակահատվածում (եռամսյակ, տարի) այլ երկրների ու միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ (ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև) արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ:
<i>Արտաքին առևտուր</i>	Արտահանում` Հայաստանի տնտեսական տարածքից ապրանքների դուրսբերում այլ երկրներ` ազատ շրջանառության համար, իսկ ներմուծում` այլ երկրներից ապրանքների ներկրում` Հայաստանի տնտեսական տարածք` ազատ շրջանառության համար:
<i>Համախառն արտաքին պարտք</i>	Ժամանակի ցանկացած պահին ընթացիկ և ոչնչով չպայմանավորված պարտավորությունների փաստացի չվճարված գումար, որը պահանջում է հիմնական պարտքի և (կամ) տոկոսների վճարումներ հետագայում` ժամանակի որևէ պահին, և իրենից ներկայացնում է ռեզիդենտների պարտավորությունները ոչ ռեզիդենտների նկատմամբ:
<i>Վարկային ռիսկ</i>	Ռիսկ, որ բանկի վարկառուն կամ այլ պարտապանը կխախտի բանկի հետ կնքած պայմանագրի պայմանները կամ չի գործի այդ պայմանագրի պայմաններին համապատասխան, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
<i>Իրացվելիության ռիսկ</i>	Ռիսկ, որ բանկը ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարելու իր պարտատերերի պահանջները` առանց լրացուցիչ կորուստներ կրելու, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
<i>Արտարժուրային ռիսկ</i>	Ռիսկ, որ շուկայում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունը բացասաբար կազդի բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
<i>Տոկոսադրույթի ռիսկ</i>	Ռիսկ, որ շուկայում տոկոսադրույթի տատանումները բացասաբար կազդեն բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
<i>Գնային ռիսկ</i>	Ռիսկ, որ շուկայում արժեթղթերի և բանկի հաշվեկշռում առկա նման այլ ֆինանսական գործիքների գների փոփոխությունը բացասաբար կազդի բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
<i>Ստանդարտ ակտիվ</i>	Ակտիվ, որը սպասարկվում է պայմանագրի համաձայն և խնդրահարույց չէ:
<i>Հսկվող ակտիվ</i>	Ակտիվ, որը սպասարկվում է սկզբնական պայմանագրի համաձայն, սակայն ի հայտ են գալիս այնպիսի պայմաններ, որի պարագայում կարող է վտանգվել ակտիվը սպասարկելու փոխառուի բավարար ունակությունը:
<i>Ոչ ստանդարտ ակտիվ</i>	Ակտիվ, որի գծով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կապված փոխառուի ֆինանսական վատ դրության կամ պարտքը մարելու նրա անկարողության հետ:
<i>Կասկածելի ակտիվ</i>	Ակտիվ, որի գծով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում, այն առավել խնդրահարույց է, ինչի պատճառով վերջինիս հավաքագրումը տվյալ պահին դառնում է չափազանց դժվար կամ անհնար:
<i>Անհուսալի ակտիվ</i>	Անհավաքագրելի և ամբողջությամբ արժեզրկված ակտիվ, որի` հաշվեկշռում որպես ակտիվ հաշվառումը այլևս նպատակահարմար չէ:
<i>Չաշխատող ակտիվ</i>	Ակտիվ, որը բանկի կողմից դասակարգվել է որպես հսկվող կամ ոչ ստանդարտ, կամ կասկածելի, կամ անհուսալի:
<i>Խոշոր փոխառու</i>	Անձ, որի գծով ռիսկը գերազանցում է բանկի ընդհանուր կապիտալի 5 տոկոսը:
<i>Խոշոր պարտավորություն</i>	Պարտավորություն, որը առանձին վերցրած կազմում է բանկի ընդհանուր պարտավորությունների 5 և ավելի տոկոսը` առանց հաշվի առնելու փոխկապվածությունը:

<i>Ըստ ակտիվների շահութաբերություն (ROA)</i>	Տարեկան զուտ շահույթի և տարեսկզբից միջին տարեկան ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշ:
<i>Ըստ կապիտալի շահութաբերություն (ROE)</i>	Տարեկան զուտ շահույթի և տարեսկզբից միջին տարեկան ընդհանուր կապիտալի հարաբերակցության ցուցանիշ:
<i>Ընդհանուր իրացվելիություն</i>	Բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշ:
<i>Ընթացիկ իրացվելիություն</i>	Բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցության ցուցանիշ:
<i>Նորմատիվային ընդհանուր կապիտալ</i>	«Ֆինանսական վիճակի մասին» հաշվետվությունում արտացոլվող ընդհանուր կապիտալի և բանկային գործունեությունը կարգավորող Կանոնակարգ 2-ով նախատեսված նվազեցումների տարբերություն:
<i>Կապիտալի համարժեքություն</i>	Ընդհանուր նորմատիվային կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշ:
<i>Լևերիջ</i>	Ընդհանուր ակտիվների և ընդհանուր կապիտալի հարաբերակցության ցուցանիշ:
<i>Չետհաշվեկշռային պայմանական ակտիվ</i>	Ակտիվ, որը հաշվառվում է բանկի հետհաշվեկշռում: Չետհաշվեկշռային պայմանական ակտիվների մեջ են ներառվում վարկային գծերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների չօգտագործված մասը, ակրեդիտիվները, տրամադրված երաշխիքները և երաշխավորությունները:
<i>Զուտ մասհանումներ</i>	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումների և վերադարձների տարբերություն:
<i>Արտարժութային զուտ դիրք</i>	Արտարժույթով, ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների տարբերություն:
<i>Համախառն արտարժութային դիրք</i>	Հաշվարկվում է որպես տարբեր արտարժույթների դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:
<i>Չերֆինդալ-Հիրշմանի ինդեքս</i>	Շուկայական մասնաբաժինների քառակուսիների հանրագումարը: Ցուցանիշը ընդունում է արժեքներ 0 - 1 միջակայքում և բնութագրում շուկայի կենտրոնացվածությունը. 0-ին մոտ արժեքները բնութագրում են կենտրոնացվածության ցածր աստիճան:
<i>Կապիտալի տնտեսական արժեք</i>	Ընդհանուր ակտիվների ներկա արժեքի և ընդհանուր պարտավորությունների ներկա արժեքի տարբերություն:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀԱՏԵ	Համախառն ազգային տնօրինվող եկամուտ
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԵԿԲ	Եվրոպական կենտրոնական բանկ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԴՊՀ	Դաշնային պահուստային համակարգ
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՖՀՄՍ	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ
ԱՊՊԱ	Ավտոտրանսպորտային պատասխանատվության պարտադիր ապահովագրություն
ՀԿԴ	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա
ՊՊ	Պետական պարտատոմսեր
ՊԿՊ	Պետական կարճաժամկետ պարտատոմսեր
ԷՎՀ	Էլեկտրոնային վճարումների համակարգ
ՊԱՀՀ	Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ